


Արթուր Արքանցին

Քրոնիկ



1937

25 SEP 2010

66

Q-16

rusr

Գրչունկալ
Տիւրչունկալ
Գրադարան

ԱՐԺՈՒՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
(ՊԵԺԵՑԵՐ)

ՔՐՈՄՊԻԿ

1937

Դեսման Հրամանավորություն
ՅՈՐԵՎԱՐ

66
U-16

ԱՐԺՐՈՒՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
(Ի Ե Ժ Ե Ե Ր)

ՔՐՈՄՊԻԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1937

- .01. 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ներածություն	
Քրոմպիկի տեխնիկական նշանակությունը	3
Քրոմպիկի արտադրության պատմությունը	5
Քրոմպիկի արտադրության մեջ գործածվող նյութերը	6
ԽՍՀՄ-ի քրոմիտի հանքավայրերը	7
Քրոմիտի այրման տեսությունը	9
Զերմաստիճանի ազդեցությունն որսիդացման ռեակցիոնի արագության վրա	11
Մանրացման աստիճանի ազդեցությունն որսիդացման պլոցեսի արագության վրա	14
Բյան վրա	17
Կոմպոնենտների ազդեցությունն որսիդացման արագության վրա	19
Քրոմպիկի արտադրության տեխնոլոգիան	26
Որսիդացնող վառարաններ	39
Շիկացած մասսայի մշակումը ջրով (վայելուման)	48
Նատրիումական քրոմպիկի համամիութենական ստանդարտը OCT-64	58
Կալիումական քրոմպիկ K ₂ Cr ₂ O ₇	59
Կալիումական քրոմպիկի համամիութենական ստանդարտը OCT-65	61
Քրոմպիկի ազդեցությունը մարդու որդանիզմի վրա և պայքարն այդ ազդեցության դեմ	61

3539-84

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծանր մետաղների միացությունների մեջ քրոմի իր գործածության մաշտաբով բանում է հինգերորդ տեղը, իսկ իր նշանակությամբ—առանձնահատուկ տեղ:

Մետաղական քրոմը հայտնաբերել ե 1797 թվին ֆրանսական գիտնական Վոկելեն-ր (Vauquelin): Քրոմի հայտնաբերման աղբյուրը յեղիլ ե քրօմային կապարը կամ, ինչպես սովորաբար անվանում են, Ուշալյան կարմիր քրօմային հանքը՝ PbCrO₄:


Քրոմ հունարեն նշանակում ե ներկ (κρωμα—կրառւ): Այս մետաղն այսպիսի կոչում ստացել ե շնորհիվ այն բանի, վոր նրա բոլոր միացությունները գունավորված են տարրեր, գեղեցիկ գույններով:

Մետաղական քրոմն սպիտակ արծաթափայլ մետաղ ե. նա բավականին կարծր ե, կարող ե կտրել ապակին: Քրոմի կարծրությունն ել ազելի մեծանում ե, յերբ իր սեղ ածխածին ե պարունակում (1,5—3%). այս գեղգում նրա կարծրությունը հասնում է 9-ի (համաձայն կարծրության սանդղակի). տիսակարար կշիռը՝ 6,9—7,2, հալման ջերմաստիճանը հավասար ե 1520°-ի, յեռում ե 2200°-ից ավելի բարձր ջերմաստիճանում: Քրոմը ընորոշվում ե նրանով, վոր նա բավականին կայուն մետաղ ե. խոնավ և չոր ողում աննկատելի կերպով ե ոքսիդանում ե, թթվածնի հետ սիանում ե (այրվում) միմիայն բարձր ճերմաստիճանում—գոյացնելով քրոմ տրիօքսիդ՝ Cr₂O₃: Այս միացության մեջ քրոմը հանգես ե գալիս ինչպես յեռարժեք մետաղ: Ցենարժեք քրոմի միացություններն ոժագած են ամֆոտեր հատկությամբ (այսինքն ունեն և՛ հիմնային, և՛ թթվային հատկություն): Ցենարժեք քրոմը, հեշտությամբ ոքսիդանալով, վեր ե ածվում վիցարժեք քրոմի: Քրոմն իր վեցարժեք միացություններում ոժագած ե թթվային հատկությամբ: Նոսրացրած ծծմբական և աղոտական թթուները մատաղական քրոմի վրա չեն ներկործում:

Քրոսը բնության մեջ հանդես է գալիս միացություններում. նրա ամենատարածված և տերևնիկական նշանակություն ունեցող միացություններն են — քրոմային յերկարը — քրոմբը՝ FeCrO_4 կամ $\text{FeO} \cdot \text{Cr}_2\text{O}_3$, և կարմիր կապարային հանքը — կրոկոհիթը՝ PbCrO_4 :

Տեխնիկայում քրոմ ստանալու համար անհրաժեշտ հումույթ հանդիսանում է քրոմային յերկաթը: Այս հանքն ածխի հետ բարձր ջերմաստիճանի տակ շիկացնելիս՝ քրոմը յենթարկվում է վերականգնման և վերջինս յերկաթի հետ տալիս է համաձուլվածք, վորին ֆերո-քրոմ անունն են տալիս: Այս ձեռք ստացված համաձուլվածքը պարունակում է բավականին մեծ քանակությամբ ածխածին, վորը դժվարացնում է այն գործածել՝ քիչ ածխածին պարունակող քրոմային յերկաթ ստանալու համար:

Մաքուր, առանց ածխածնի քրոմ կարելի յե ստանալ քրոմիտից՝ մետաղական ալումինիումի միջոցով (ոեակցիան եկզոթերմիկ ե):



Շնորհիվ այն բանի, վոր քրոմը բավականին կարծր է, նրանով ծածկում են մետաղական առարկաները (*Խրոմիրօվահայե*): Քրոմի ոգոնությամբ ստացվում են բազմաթիվ համաձուլվածքներ, վորոնք ոժաված են կարծրությամբ և յիմիապես դիմացկուն են: Քրոմի համաձուլվածքներն ելեկտրոտեխնիկայում գործ են ածում ելեկտրական դիմադրության վառարաններում, ինչպես, որինակ, քրոմ-նիկել համաձուլվածքը (60—80% նիկել և 10—25% քրոմ):

ՔՐՈՄԻԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քրոմի միացություններից տեխնիկայում աչքի ընկնող նշանակություն ունեն նաև բարդում կամ կալիումի բիերումաթի, վոր տեխնիկական լեզվով անվանում են քրոմափիկ. այս միացությունը հանդիսանում է վորպես յելանյութ՝ քրոմի մյուս միացություններն ստանալու համար: Քրոմի միացությունները գործ են ածում հետեւյալ արտադրությունների մեջ:

1. Կաշվի արտադրության մեջ վորպես դաբաղանյութ և ներկ գործ են ածում քրոմափիկ և քրոմային շերը՝ $\text{Na}_2\text{SO}_4 \cdot \text{Cr}_2(\text{SO}_4)_3 \cdot 24\text{H}_2\text{O}$:
2. Տեքստիլ արդյունաբերության մեջ:
3. Գյուղատնտեսության մեջ:
4. Մետալուրգիայում — քրոմային պողպատ, ֆերոքրոմ ստանալու համար:
5. Ացետիլենից սինթետիկ կառչուկ ստանալ — տեխնոլոգիայում վորպես ացետիլեն գազը մաքրող միջոց:
6. Ֆոտո-տեխնիկայում:
7. Տպագրական գործում (քրոմի տողաքաֆ):
8. Ինչպես ներկ (քրոմի միացություններից կարելի յե ստանալ դեղին, կանաչ, կինոմոնադույն, կարմիր, նարնջագույն ներկեր):
9. Ապակու արտադրության մեջ Cr_2O_3 -ը գործ են ածում գեղեցիկ կանաչ ապակի ստանալու համար:
10. Նույն ապակակի համար նաև ֆարֆորի (ձենապակի) արտադրության մեջ:
11. Լուցկու արտադրության մեջ (պատրաստում են պայթուցիկ խառնուրդ):
12. Քացախաթթաւն և ողին մաքրելու համար:

ՔՐՈՄՊԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քրոմի միացությունների արտադրությունը շատ հին պատմություն չունի, — այդ սկզբել են անցած դարի սկզբներին: Ինչպես վերև ասացինք, ինքը՝ սետաղական քրոմը հայտնաբերվել է 1797 թվին, վորից մի փոքր առաջ հայտնաբերվել են միներալ քրոմիտը, իսկ այս կերպինից ստացվում են քրոմի բալոր միացությունները:

Քրոմպիկ ստանալու վերաբերյալ առաջին փաստաթուղթը 1817 թվին հրատարակվող՝ Փրանսական տեխնիկական ամսագիրն են, վորտեղ նկարագրվում են կալիումի քրոմպիկ ստանալու հետևյալ յեղանակը. մանրացրած քրոմային յերկաթի հետ խառնում եյին մոտ նրա կշռի կեսի չափ կալիումական սելիտրա՝ KNO_3 , և այդ խառնուրդը շիկացնում եյին յերկաթյա տիզելի մեջ: Հետագայում քրոմպիկի արտադրության մեջ այդ թանգարժեք սելիտրան փոխարինվում են ավելի աժան նյութով — պոտասի՝ K_2CO_3 :

Ավելի քան առաջադիմական քայլ արին Նորվեգիայում անցած դարի կեսին. այնտեղ քրոմային յերկաթի և պոտաշի խառնուրդին ավելացրին համապատասխան քանակությամբ չինացցրած կիր^a CaO , վորի շնորհիվ հանգի (քրոմիտի) ոքսիդացումն աչքի ընկնող չափով արագանում են: Քրոմպիկ ստանալու այս յեղանակը համարյա նույնությամբ շարունակվում են մինչև մեր որերը:

Քրոմպիկի ստացումը Ռուսաստանում սկսվել են անցած դարի հիսունական թվականներին: Քրոմպիկի արտադրությամբ Կոկշանյան գործարանում զրադիվը են գուղացիներ Դ. Բոնդյագը և Կ. Յա. Ռուկովը, Այստեղ քրոմպիկի արտադրությունը յեղել է չափից գուրս պրիմիտիվ. մինչև 1870 թվականն այդ գործարանում մեքենա չի յեղել: Լուծույթների համար պատրաստում եյին հողե բաքեր (գուռ): Լուծույթները մի տեղից մյուս տեղուն եյին փոխադրում կամ փայտյա պոմպերով և կամ դույլ բռվ:

1868 թվին Ռուշկովի մահից հետո նրա տղան — Պյոտր Կապիտանովիը — քրոմպիկի արտադրությունն ելավելի կատարելագործեց. այդ առավել ևս աչքի ընկափ այն ժամանակ, յերբ նա 1879 թվին Կոկշանյան գործարանը հրավիրեց ինձեներուտիենուող Պ. Պ. Վալբերգին:

Սկզբնական շրջանում տարեկան արտադրում եյին $10-12$ տոնն կալիումի քրոմպիկ: Աստիճանաբար քրոմպիկի արտադրանքն ավելանում ե. 1880—1890 թվականներին քրոմպիկի տարեկան արտադրանքը համանում են մինչև 800 տ: Նախապատերազմյան շրջանի վերջին տարիներում քրոմպիկի տարեկան արտադրանքը հասնում եր 1000—1300 տ: Բացն Կոկշանյան գործարանից, քրոմպիկի արտադրությամբ զբաղվել են առևուլավյան քիմիական գործարանը (1887 թվից):

Պատերազմի ժամանակ, 1914—1915 թվին, Քրոմպիկ կայարանում, վորը գտնվում ե Սվերդլովից 42 կիլոմետր հեռավորության վրա, կառուցվում ե Շայիտանյան քիմիական գործարանը, վորտեղ կենտրոնանում են Ռւբալու յեղած մյուս մանր քրոմպիկի արտադրությունները և յեղած բոլոր մասնագետները:

Գործարանի կառուցման համար ընտրած տեղը բավականին հարամար ե. գործարանից 3 կիլոմետր հեռավորության վրա գտնվում են քրոմային յերկաթի հարուստ հանգերը (Գորգորյան հանգեր): Գործարանին մոտիկ գտնվում են լավորակ կրաքարի հանգեր. բացի սրանից, գործարանի մոտով անցնում ե յերկաթգիծ:

1931 թվին Քրոմպիկ կայարանում տեխնիկայի վերջին խոսքով կառուցվել ե քրոմպիկի նոր գործարան, վորտեղ գրված ե 2 պատվող զլանաձե վառորան, վորոնց տարեկան արտադրանքը հասնում ե 8000 տ նատրիումական քրոմպիկի: Նախատեսված ե Քրոմպիկ կայարանում կառուցել քրոմպիկի գիղանտ, վորի տարեկան արտադրանքը չորս անգամ ավելի յե լինելու, քան գոյություն ունեցող նոր գործարանի արտադրանքը: 1932 թվին Սևան լճի ափում յեղած քրոմիտի բազայի վրա Ցերեանում կառուցվեց և շահագործման հանձնվեց քրոմպիկի գործարանը, վորը հիմնականում պետք ե բավարարի Ցերեանում կառուցվող և շահագործման հանձնվեց քրոմպիկի գործարանը, վորը հիմնականում պետք ե բավարարի Ցերեանում կառուցվող Սկ-ի պահանջները:

ՔՐՈՄՊԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

Քրոմպիկ ստանալու համար ինչպես հումույթ հանդիսանում են երամային յերկաթ—քրամիտը, սողան և կիրը կամ դոլոմիտը: Այս յերեք նյութերի մանր մաղվածքի վորոշ քանակային խառնուրդը հատուկ ոքսիդացնող վառարաններում շիկացնելով՝ ստանում են նաև իրարժ մոնօքտումաս, վորը ծծմբական թթվով մշակում են և ստանում նատրիում բիքրոմա:

ՔՐՈՄԱՅԻՆ ՑԵՐԿԱԹ (ՔՐՈՄԻՏ)

Քրոմային յերկաթը՝ քրոմիտը մոխրագույն սև կիսամետաղական փայլով միներալ ե, տեսակարար կշիռը՝ 4,5—4,8, կարծրությունը՝ 5,5—6,0: Քրոմիտի քիմիական բաղադրությունն ե $\text{FeO} \cdot \text{Cr}_2\text{O}_3$ կամ կարող ենք գրել $\text{Fe}(\text{CrO}_2)_2$: Քրոմիտի մաքուր քրոմային յերկաթի մեջ կա 67,86% Cr_2O_3 և 32,14% FeO : Բնության մեջ գտնվող քրոմիտը քիմիական մաքուր չի լինում. նա իր մեջ պարունակում ե 35—55% Cr_2O_3 : Այն քրոմային յերկաթը, վորն իր մեջ պարունակում ե 40—55% Cr_2O_3 , ուղղակի գործ են ածում քրոմպիկ ստանալու:

համար, իսկ սրանից ավելի ցածր տոկոս Cr_2O_3 պարունակող հանքը նախ հարստացնող գործարաններում յենթարկում են հարստացման և ապա նոր գործ են ածում քրոմպիկի արտադրության մեջ, կամ թե չեն առանց հարստացնելու՝ նրանից պատրաստում են քրոմային հրակացուն աղյուսներ:

Բնության մեջ գտնվող քրոմիտն իր մեջ պարունակում են զանազան խառնուրդներ, ինչպես, որինակ, SiO_2 , Al_2O_3 , MgO , CaO : Քրոմիտն ուղեկցում են ոճաքարին, իսկ այս վերջինս ել ուղեկցում են կրաքարին:

Ստորև բերված № 1-ին աղյուսակը ցույց է տալիս տարբեր յերկրաների քրոմային յերկաթի քիմիական բաղադրությունը:

Աղյուսակ № 1

Արտիդներ	Cr_2O_3	FeO	Al_2O_3	MgO	SiO_2	CaO
Ցերկերներ						
Հնդկաստան	47,50	35,70	9,30	6,00	1,5	—
Հունաստան	45,10	14,54	22,22	14,64	—	—
Տաճկաստան	51,32	13,32	12,80	12,55	4,95	3,15
Ռոդեզիա	43,10	14,10	12,10	14,2	5,9	—
Կալիֆորնիա	34,50	14,20	19,00	20,50	11,00	0,80
Կուբա	39,50	15,80	26,20	15,80	3,00	—
Ուրալ (մինիմում—մաքսիմում)	33—54	13—24	3—27	5—12	3—6,5	5—5,5
Հայաստան	42,02	14,17	8,16	19,75	9,53	հետքեր
(Ցերկու բնուրու անտլիզի արդյունքները)	49,00	11,29	9,64	16,30	4,98	հետքեր

Քրոմիտի հանքեր կան նոր կալեղոնիայում (կղզի յե, վորը գտընվում ե Մեծ ովկիանոսում, Ավստրալիայի մոտ), Ռողեկիայում (անդիկան գաղութ ե հարավային Աֆրիկայում), Հունաստանում, Կուբայում, Հնդկաստանում, Տաճկաստանում: Խորհրդային Միության մեջ քրոմիտի հանքեր կան Ուրալում, Սիբիրում և Անդրկովկասում (գլխավորագես Հայաստանում):

Հայաստանում քրոմիտի հանքերը գտնվում են Սևանի լճի ափին՝ Շորժում, Ջիլում, Բաբաջան Թարասիում, Բասարգեշարում, Քրդստանում (Խստի Բուլալ քոչի շրջանում), Աղբաբայում, Արտարանում և այլն:

Վերևում հիշված չորս յերկրները (նոր կալեղոնիա, Ռողեկիա, Հնդկաստան և ԽՍՀՄ) տալիս են ամբողջ աշխարհի քրոմիտի արտադրանքի $90^0/_{\circ}$ ը:

Ստորև բերված № 2 աղյուսակը ցույց է տալիս առանձին յերկրների քրոմիտի արտադրանքը տարբեր տարիներում, տաններով հաշված:

Աղյուսակ № 2

Ցարիչներ	1912	1916	1922	1923	1924	1925	1927	1928	1929
Ցերկերներ									
Ռողեկիա . . .	6,834	80,624	84,799	87,702	156,692	—	197,782	219,428	293,10
Նոր Կալեղոնիա	51,516	7 24	10,718	23,26	15,292	18,500	4,88	56,698	5914
Ռուսաստ. և ԽՍՀՄ	29,263	19,452	9,36	892	11,894	30,111	19,264	25,233	52,889
Հնդկաստան . . .	29,36	20,484	23,144	55,115	46,194	26,220	58,128	47,273	49,565
Կուբա . . .	—	—	—	10,537	—	—	17,256	28,50	43,135
Հունաստան . . .	64,68	9,880	9,213	14,509	14,327	11,989	17,319	20,953	22,500
Միացյալ Նահանգն.	204	47,803	361	231	237	110	—	—	—
Հարավ Ալավակիա	—	—	—	—	—	—	11,590	16,680	30,529
Տաճկաստան . . .	—	9,880	2,540	—	—	—	16,609	64,400	10,100
Ճապոնիա . . .	13,26	—	—	458	—	—	9,783	10,101	11,000

ԽԱՅՄ ՔՐՈՄԻՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԸ

Ուրալի հանքավայրերը. Ուրալի քրոմիտի հանքավայրերի խորությունն ընդհանուր առմամբ հասնում ե 10 մետրի, բայց կան նաև այնպիսի հանքավայրեր, վորոնց խորությունը հասնում ե 40—80 մետրի: Ուրալում հայտնի յե քրոմիտի 300 հանքավայր, վորոնցից ներկայումն շատ քիչերն են շահագործվում: Կարևոր տնտեսական նշանակություն ունեցող քրոմիտի հանքավայրերը հետևյալներն են:

1. Սարտանվյան հանքավայր. Գտնվում է Պերմ քաղաքից 225 կիլոմետր հեռու, Քիրով յենթակայանում Այս հանքավայրը և 0 ՀՄ-ի ամենամուգ հանքավայրերից ե. 1933 թվին այդ հանքավայրի պահանջությունը ե 13.000.000 տոնն. հանքի 35—39⁰/₀ լ Cr_2O_3 ե: շահվված ե 13.000.000 տոնն. հանքի 35—39⁰/₀ լ Cr_2O_3 ե:

2. Գուրգոյլյան հանքավայր. Գտնվում է Սվերդլովից 40 կիլոմետր հեռու, Քրամագիկ կայարանի մոտ: 1933 թվին այդ հանքավայրի պահանջությունը ե 150.000 տոնն: Հանքի 40—50⁰/₀ լ Cr_2O_3 ե:

Ուրալում, բացի այս յերկու հանքավայրերից, քրոմիտի հանքեր գտնվում են մի շարք այլ շրջաններում, ինչպես, որինակ, Ալպավյան, Ռեժեվյան, Կյուոչեվյան, Բըետինյան հանքավայրերը:

ԲԱՆԿԻՐԻԱ

1. Մեծ Բանտարի հանքավայր. Այս հանքավայրի քրոմիտը գտնվում է Դյունինիա կոչված լեռնային տեսակի հետ միասին: Նախնական

տվյալները համաձայն այդ հանքավայրում կա 15000 տոնն քրոմիտ, վորի 40—50% ը Cr_2O_3 ե:

2. Կ. լրացասանի հանքավայր. Գտնվում է Մագնիտոգորսկուց 25 կիլոմետր հեռու Նախնական տվյալների համաձայն այս հանքավայրի պաշարը հասնում է 18.000 տոննի: Cr_2O_3 -ի տոկոսը հասնում է 37—40%:

3. Մենժինյան հանքավայր. Գտնվում է Մագնիտոգորսկուց 100 կիլոմետր հեռու: Հնդհանուր պաշարը հասնում է 195.000 տոննի: Հանքի 30% ը Cr_2O_3 ե:

ՄԻԶԻՆ ՎՈԼԴԱ

1. Խալիլովյան հսբթավայր. Գտնվում է Խալիլով կայարանի մոտ: 1932 թվի տվյալների համաձայն այս հանքավայրի պաշարը հասնում է 30.000 տոննի: Հանքի 48—56% ը Cr_2O_3 ե:

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանում քրոմիտի հանքեր գտնվում են Սևանի լճի արևելյան ափին—Նաղեծղինո, Զիլ, Բաբաջանդարա, Կուշիկալա և Սատանախաչ գյուղերի սոտերքում: Մինչև այժմ Նաղեծղինո գյուղի մոտ հայտնաբերված է 13 հանքավայր: Ամենից լավ ուսումնասիրված են Նաղեծղինոյի և Զիլի հանքավայրերը: Զիլում հարտնաբերված է քրոմիտի և հանքավայր: Այստեղի քրոմիտը գտնվում է ուլտրահիմային լեռնային տեսակների հետ միասին, ինչպես, որինակ, Դյունիդի, Պերիգոտիտների և ունագույն միասին: Առայժմ այս հանքավայրերի քրոմիտի պաշարը լրիվ ուսումնասիրված չե: Հանքաբան Զրբաշյանը քրոմիտի ընդհանուր պաշարի մասին հետևյալն է հայտնում: «Այս հանքավայրերի քրոմիտի պաշարն այնքան ե, վոր կարելի յե կազմամակերպել քրոմպիկի կիսագործարանային արտադրություն»:


Քրիստանի հանքավայր. Այս հանքավայրը գտնվում է Բամարգեչարից 30 կիլոմետր հեռավորության վրա, զոչ հեռու Խոտի-Բուլաղ գյուղից: Այս հանքավայրի քրոմիտի պաշարը հասնում է 50.000 տոննի:

ՍՈՒԴԱ

Քրոմպիկի արտադրության մեջ գործ են ածում մոտ 98% Na_2CO_3 պարունակող սողա: Մնացած յերկու տոկոսում գտնվում են NaCl , H_2O և այլն նյութեր: Սողայի ծավալային կշիռը հավասար է 1,2 տոնն խորանարդասետրում: Սողան գործալան են բերում փայտյա տակառներով կամ պարկերով:

Կ Ի Բ

Կիր ստանում են կրաքարի CaCO_3 -ի շիկացումից: Կրաքարը շիկացնելիս, համաձայն պրոֆ. Զավրիեի, 910°-ից սկսում է տարրալուծվել: տարրալուծումը վերջանում է 1200°-ում: տարրալուծման ռեակցիան վերջանում է 1200°-ում: Այդ ռեակցիան տեղի յե ունենում ըստ հետևյալ հավասարման՝



Դ Ո Լ Ո Մ Ի Տ

Քրոմպիկի արտադրության մեջ գործմիտը կատարում է նույն դերը, ինչ վոր կիրը: Դոլոմիտի քիմիական փորմուլն է $\text{CaCO}_3 \cdot \text{MgCO}_3$, ունի մանր ոսմոբուդրային բրուեղներ: Կարծրությունը 3,5—4 ե, տեսակաբար կշիռը՝ 2,85—2,95: Քիմիապես մաքուր գործմիտը պարունակում է 30,5% CaO , 21,7% MgO , 47,6% CO_2 :


Բնության մեջ գտնվող գործմիտը քիմիապես մաքուր չի լինում, սովորաբար նաև պարունակում է SiO_2 , Al_2O_3 , Fe_2O_3 , MnO և այլն:

Վառարանում գործմիտն սկզբում կորցնում է ջուրը, վորից հետո 720°-ից սկսվում է տարրալուծվել MgCO_3 -ը, իսկ 910°-ից արդեն տարրալուծման ե յենթարկվում CaCO_3 -ը: տարրալուծման ռեակցիան վերջանում է 1100°-ում: Ստորև բերված ե բնության մեջ գտնվող գործմիտի անալիզը — 20,1% MgO , 30,5% CaO , 1,1% SiO_2 , 0,2% Fe_2O_3 , 47,6% CO_2 գազը:

Ուրալում քրոմպիկի արտադրության մեջ գործածվող Խալիբասյելյան հանքավայրի գործմիտի քիմիական բաղադրությունն է 15,6—20% MgO , 33,2—33,2% CaO , 0,9—4,2% $\text{SiO}_2 + \text{Al}_2\text{O}_3 + \text{Fe}_2\text{O}_3$:

ՔՐՈՄԻՏԻ ԱՅՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական պրոցեսը, վորը տեղի յե ունենում քրոմային յերկարի շիկացման ժամանակ, այն ե, վոր Cr_2O_3 -ը, միանալով թթվածնի հետ, վերածվում է ավելի բարձր կարգի ոքսիդի՝ CrO_3 -ի: Ոքսիդացման ռեակցիան կարող ենք պատկերացնել հետևյալ կերպ:




Ցեթե առանձին շիկացնելու լինենք Cr_2O_3 -ը, նու չի ոքսիդանա, պատճման այն ե, վոր CrO_3 -ը 250 աստիճանից բարձր արդեն տարրալուծման ե յենթարկվում վերածվելով Cr_2O_3 -ի և O_2 ի: Հետեւ պահանջանարդար պաշարը հիշված ռեակցիան չի կարող տեղի ունենալ այն ջերմասահճանում,

վոր ունի վառարանը, այն ե 1100° — 1200°։ Վորպեսզի հնարավոր լինի Cr_2O_3 -ի ոքսիդացումը, անհրաժեշտ ե Cr_2O_3 -ի հետ միասին վերցնել նաև սողա՝ Na_2CO_3 , կամ պոտաշ՝ K_2CO_3 ։ Սոդայի ներկայության դեպում գոյանում ե դեղին աղ — նատրիում մանգնումաս՝ Na_2CrO_4 , վորը բարձր ջերմաստիճանում տարրալուծման չի յենթարկվում։ Սոդայի փոխարեն կարելի յե վերցնել մի ուրիշ աղ, ինչպես, որինակ, նատրիում սուլֆատ՝ Na_2SO_4 , սեղանի աղ և այլն։ Գործնականում միմիայն սոդայով ոքսիդացումը մինչև վերջը չի կարելի հասցնել. վոչ մի փորձի ժամանակ ոքսիդացումը 50% ից ավելի չի յեղել։ Cr_2O_3 -ի ոքսիդացումն ավելի լավ ե ընթանում այն ժամանակ, յերբ քրոմային յերկաթի և սոդայի խառնուրդին ավելացնում են «լրացուցիչ»։ սովորաբար այս նպատակով զործ են ածում կիր, կրաքար կամ դոլոմիտ։

Նատրումական քրոմայիկ ստանալու պրոցեսը հետևյալն ե. ամենից առաջ մանրացնում են քրոմիտը. ինչքան քրոմիտը լավ ե մանրացվում, այնքան լավ կընթանա ոքսիդացման պրոցեսը. մանրացրած քրոմիտը խառնում են սոդայի և չհանգըրած կրի կամ դոլոմիտի հետ և այս խառնուրդը (շիխտ) հատուկ վառարաններում յենթարկում են ոքսիդացնող-շիկացման. Կրի կամ դոլոմիտի դերն այն ե, վոր նա դժվարացնում ե սոդայի հալումը, հետևապես արագացնում ե ոքսիդացման պրոցեսը։ Կիրը միաժամանակ վառարանից դուրս յեկող շիկացման մասսան ծակոտիկն ե դարձնում, վորը հետազայում հեշտացնում ե ջրով մշակելու գործը։

Ոքսիդացնող-շիկացնող վառարաններում տեղի ունեցող քիմիական ռեակցիան կարելի ե արտահայտել հետևյալ կերպ։




այսինքն ոքսիդացումից հետո ստացվում ե շիկացած մասսա, վորն իր մեջ պարունակում ե նատրիում մոնոքրոմատ՝ Na_2CrO_4 , յերկաթոքսիդ՝ Fe_2O_3 , և փոփոխման չենթարկվող կիր՝ CaO (վառարանում գոյանում ե նաև վորոշ չափով կալցիում մոնոքրոմատ՝ CaCrO_4 , վորի մասին կխոսենք հետազայում)։

Շիկացած մասսան ջրով մշակելիս մասսայից անջատվում ե և լուծույթի մեջ ե անցնում ջրում լավ լուծվող նատրիում մոնոքրոմատը, իսկ մնացորդում, վոր սովորաբար անվանում են ատվալ, մնում ե ջրում չլուծվող Fe_2O_3 -ը, CaO -ը և այն հանքերը, վորոնք ուղեկցում են քրոմային յերկաթին, ինչպես նաև ատվալում մնում ե ջրում դժվար լուծվող CaCrO_4 -ը։


Ստացված նատրիում մոնոքրոմատի լուծույթը յենթարկում են խտացման (կոնցենտրացիայի), Մոնոքրոմատի խիտ լուծույթի վրա

ներգործելով խիտ ծծմբական թթվով՝ H_2SO_4 -ով, ստացվում ե նատրիում բիտրոմատ՝ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$.




Այս պրոցեսի համար սովորաբար գործ են ածում 52° — 66° Բե' խտություն ունեցող ծծմբական թթու նատրիում մոնոքրոմատի փոխանցումը նատրիումբիտրոմատի՝ տեխնիկական լեզվով կոչվում ե խածատում (տրավկա)։ Na_2SO_4 -ը, վորպես ավելի դժվար լուծվող նյութ, նստում ե այն կաթսայի հատակին, վորտեղ կատարում են խածատումը, իսկ վերկում մնում ե նատրիում բիտրոմատի լուծույթը, վոր անվանվում ե կարմր ալկալի, կարմիր ալկալին տեղափոխում են յերկրորդ գոլորշացնող կաթսայի մեջ, և այստեղ լուծույթը յենթարկում են գոլորշացման։ Յերբ լուծույթը բավականին խտանում է գոլորշացնող ձուլող կաթսայի մեջ և գոլորշացումը շարունակում են մինչև այն ժամանակ, յերբ լուծույթից համարյա ամրողշրվին հեռանում ե ջուրը. ստացված մասսան լցնում են յերկաթյա թմրուկների մեջ. այստեղ քրոմայիկը սառչում ե ու կարծրանում, վորից հետո փակում են թմրուկի բերանը և հաւում վաճառքի։ Na_2SO_4 -ը, վորը վորոշ չափով պարունակում ե $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$, գործ են ածում ցածրորակ ապակի ստանալու համար, կամ նրանից պատրաստում են նատրիում սուլֆիդ՝ Na_2S , իսկ այս վերջինս ել գործ են ածում կաշվի արտադրության մեջ։

Վերջերս արտասահմանում, ինչպես նաև մեզ մոտ՝ Ուրալի քրոմայիկի նոր գործարանում, կրի փոխարին գործ են ածում դոլոմիտ, այս գեպքում Cr_2O_3 -ի կորուստը համեմատաբար ալելի քիչ ե լինում, վորովհետև վառարանում գոյանում ե մագնեզիում մոնոքրոմատ, վորը շատ հեղափոխական արդյունաբերությամբ տարրալուծվում ե համաձայն սառեկ բերված ռեակցիայի։




Դոլոմիտ գործածելու դեպքում CaCrO_4 ավելի քիչ ե գոյանում, վորովհետև CaO -ի քանակը դոլոմիտի մեջ ավելի քիչ ե, քան կրի մեջ։

Ինչպես արդեն ասված ե, ոքսիդացնող վառարաններում յուրաքանչիբում ոքսիդացումը մինչև վեցարժեք քրոմի տեղի յեն ունենում ըստ հետևյալ ռեակցիայի։




Ինչպես տեսնում ենք՝ այս ռեակցիան հիմական ռեակցիան ե, վորը տեղի յե ունենում վառարանում, բացի այս ռեակցիայից, վառա

բանում տեղի յեւ ունենում նաև մի ուրիշ ռեակցիա՝ կիրը ռեակցիայի մեջ եւ մանում քրոմիտի հետ — գոյացնելով ջրում դժվար լուծվող կալցիում մոնոքրոմատ.



իսկ յեթե կիրը փոխարինվում ե դոլոմիտով, այդ գեղքում ռհակցիան կընթանա հետևյալ կերպ.



Առաջին ռեակցիան համեմատաբար ավելի արագ և ընթանում, քան
2-րդ և 3-րդ ռեակցիաները. այս բացատրվում է այն բանով, վոր առա-
ջին ռեակցիայի ժամանակ ռեակցիային մասնակցում են՝ կարծը (քրո-
մային յերկաթը), հեղուկ (սողան) և գազային (թթվածինը) նյութեր,
այն դեպքում, յերբ վերջին յերկու ռեակցիաների ժամանակ մաս-
նակցող նյութերից քրոմային յերկաթը և կիրը (կամ դուօմիտը) կարծը
նյութեր են, իսկ թթվածինը՝ գազային։ Այս արդեն պարզ ցույց է
տալիս, վոր առաջին ռեակցիայի արագությունն ավելի մեծ պետք է
լինի, քան վերջին յերկու ռեակցիաների արագությունը, վորովհետեւ
քիմիական ռեակցիան հեղուկ, կարծը և գազային նյութերի մեջ ավելի
արագ կընթանա, քան կարծը և գազային նյութերի մեջ։

Ոքսիդացման ժամանակ CaCrO_4 -ի և MgCrO_4 -ի գոյացումը ցանկալի չեն, վորովհետև շիկացած սասաւան ջրով մշակելու ժամանակ CaCrO_4 -ը և MgCrO_4 -ը, վորպես գֆվար լուծվող նյութեր, չեն անցնում լուծույթի մեջ, այլ մնում են արտադրության մնացորդի՝ առվալի մեջ. հետևապես տեղի յեւ ունենում Cr_2O_3 -ի բավականին մեծ կորուստ:

Վառարանում տեղի ուն եցող ոքսիդացման ռեակցիայի արագության վրա ազդում են հետեւյալ ֆակտորները՝ վառարանի ջերմաստիճանը, մասնիկների մեծությունը, կոմպոնենտների քանակը, ողի քանակը և այլն:

ԶԵՐՄԱՍԻՑԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ. ՈՔՍԻԴԱՑՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ
ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ոքորդացման ռեակցիայի արարագության վրա խոշոր կերպով ազդում ե ջերմաստիճանը. Ջերմաստիճանի նպատակահարմար պայմանները բարձրացնում են ոքորդացման տոկոսը և կրճատում ոքորդացման ժամանակամիջոցը: Ուրալի քրոմպիկ գործարանում կատարվող փորձերը ավելի են հետեւյալ արդյունքը:

Փորձի համար զերցրել են 100 կշռամաս քրոմիտ, 100 կշռամաս կիր և 70 կշռամաս սողա. խառնուրդը տաքացրել են տարբեր ջերմաստիճաններում. տաքացյան ժամանակամիջոցը յեղել է 1 ժամ:

Զերմաստիճան	550 ⁰	600 ⁰	650 ⁰	800 ⁰	900 ⁰	1200 ⁰
Ուղարկացման %	հետեւյ	50	51	90	97	70

Այս աղյուսակից կարելի յե տեսնել, վոր նատրիում մոնոքրոմատի գոյացումը, ջերմաստիճանի մեծացման հետ միասին, սկզբում մեծանում է մինչև 1100°, վորից հետո բավականին զգալի չափով իջնում ե ոչ-սիդացման տոկոսը։ Այստեղից յերեսում ե, վոր լաբորատորական պայմաններում (յերբ շիխտայի հաստությունը 2—3 մմ ե) բարձր ջերմաստիճանում ռօսիդացումն ընթանում ե բավականի արագ։ Դորժարանային պայմաններում, վորտեղ շիխտայի հաստությունը 50 միլիմետրից ավելի յե, հետեւապես տարրալուծման ժամանակամիջոցն այսպես թե այնպես ավելի յերկար պետք լինի։

Ոքսիդացնող վառարաններում 900°-ից բարձր ջերմաստիճան գտընալում և միմիշայն վառարանի կես մասում, խակ մյուս կեսում (յետեի մասում) ջերմաստիճանն ավելի ցածր է, հետեւապես ազգման դոնան անշահան է: Ուրալի քրոմպիկ գործարանում կատարված փորձերը տվել են հետեւյալ արդյունքը. վառարանի տարբեր մասերից, նույն ժամանակամիջոցներում գերզրած շիկացած մասսայի մեջ յիշել եւ.—

Առաջին պատռհանի մոտ (վորակղ զերմաստիճանն ամենաբարձրն է) ջրութ լուծվազ
ցրօն է քանակը յեղել և 18—20%

Ցերկովը պատուհանի մոտ ջրում լուծվող CrO_3 -ի քանակը յիշել է $15-17\%$

...so as to make the right hand...was unable to gain

Բարձր ջերմաստիճանը տալիս ու սր ուրուշ է ակ արդյունք

խտակի մեջ մոցնում ենք CaO կամ դոլոմիտ, բացի այս, պոր գո-

CaCrO_4 ինչպես ասացինք՝

CaCO₃-P 100 μm.


ան ջրով մշակելու ժամանակ՝ CaCrO_4 -ը մնում է առվալի մեջ, այս

ատճառով ել տեղի յեւ ունենում քըսմի մեծ կրուստ Փարձերը ցույց


սը, նույնքան ել շիկացած մասսայի մեջ Հօհօն է գտնվուի պարզ գեղասահմանում ավելի

Ա. ՔՐԵ և պողովառան Հայոց բարեւ է

անկայուն ե, քան NiC_2O_4 -ը՝ 1000° -ի տակ CaCrO_4 -ը, ըստ ստորև բերված ռեակցիայի, յենթարկվում ե ատրուպուժման.



Ինչպես տեսնում եք, ոքսիդացման պրոցեսի վրա ազդող Փակտորներից ամենակարևորը ջերմաստիճանն ե. այս յերկույթը բազմակողմանի ուսումնասիրել ե պրոֆ. Յուշկեվիչը. Պրոֆ. Յուշկեվիչի աշխատանքների արդյունքն արտահայտում ե ստորև բերված դիագրամը (տես նկ. 1):



Շիկացման ժամանակամիջոցն արտահայտված ժամերով
նկ. 1.

Ինչպես դիագրամից յերեսում ե, ամենանպատակահարմար ջերմաստիճանը կազմում է 1050°, իսկ ամենաական ավելի լրիվ ե լինում, 1050°-ից բարձ ջերմաստիճաններն են: Այս դիագրամի հորիզոնական առանցքի

վրա տրված ե ժամանակը՝ արտահայտված ժամերով, իսկ ուղղահայաց առանցքի վրա՝ Cr_2O_3 -ի ոքսիդացումը CrO_3 -ի արտահայտված տոկոսներով: Այս կորերից կետերով նշանակվածը վերաբերում ե կրային շիխային, վորը կազմված ե $37,85\%$ քրոմիտի, $37,85\%$ կրի և $24,3\%$ սոդայի խառնուրդից: Կատարված աշխատանքների ժամանակ գործածվող քրոմիտն ունեցել ե հետեւյալ բաղադրությունը՝ $44,61\%$ Cr_2O_3 , $24,28\%$ FeO , $9,86\%$ Al_2O_3 , $4,04\%$ SiO_2 , կրի կազմված ե յեղել 90% CaO -ից, $6,43\%$ MgO -ից $2,04\%$ $\text{Al}_2\text{O}_3 + \text{Fe}_2\text{O}_3$ -ից:

Վերը բերած դիագրամից մենք տեսնում ենք, վոր 1050° -ի տակ, յերբ շիկացման ժամանակամիջոցը 2,3 և 4 ժամ ե, ոքսիդացման տոկոսը նետեւյալն ե՝ $26,20\%$, $96,76\%$, $97,98\%$: Յերբ ոքսիդացման պրոցեսը տանում են 1160° -ում, այդ դեպքում, յերբ ոքսիդացումը տարվում ե յերկու ժամում, ամրող Cr_2O_3 -ի $98,80\%$ -ը վեր ե ածվում CrO_3 -ի, իսկ չորս ժամված ընթացքում ոքսիդացման տոկոսը լինում ե $99,52$:

Այս ջերմաստիճաններից ավելի ցածր ջերմաստիճաններն աննպատակահարմար են, վորովհետև Cr_2O_3 -ի ոքսիդացումը CrO_3 -ի շատ փոքր ե լինում. ինչպես, որինակ, 830° -ում, յերբ ոքսիդացման ժամանակամիջոցը 6 ժամ ե, միաժայն 68% Cr_2O_3 և փոխանցվում CrO_3 -ի:

ՄԱՆՐԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈԲՍԻԴԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ոքսիդացման աստիճանի և արագության վրա խոշոր չափով ազդում ե կուպոնենտների, հատկապես քրոմիտի հատիկների, մեծությունը: Ինչքան քրոմիտն ավելի մանր ե, նույնքան լրիվ և արագ ե անթունում Cr_2O_3 -ի ոքսիդացումը: Սովորաբար պրակտիկայում դորձ են ածում քրոմիտի այնպիսի մանրվածք, վորը կարող ե անցնել 1 մմ³-ում 1600 անցք ունեցող մաղի միջով, իսկ վերջնար քրոմիտն այնքան են մանրացնում, վոր այդ մանրվածքն անցնում ե 1 մմ³-ում 4900 անցք ունեցող մաղով:

Աղքատ քրոմիտի՝ Cr_2O_3 -ի մասնիկները շրջապատված են ավելի մեծ քանակությամբ կողմնակի նյութերով, քան հարուստ քրոմիտում: Այս ե պատճառը, վոր աղքատ քրոմիտի մեջ յեղած Cr_2O_3 -ն ավելի քիչ հարավորություն ունի շիվելու սոլայի և թթվածնի հետ, քան հարուստ քրոմիտում յեղած Cr_2O_3 -ը: Հետեւապես մանրացման աստիճանը Cr_2O_3 -ով աղքատ հանքերի համար ավելի սեծ ազդեցություն ե ունենում ոքսիդացման արագության վրա, քան հարուստ հանքերի համար:

Ստորև բերված և 3 աղյուսակը, վորը վերցված ե Ա. Պաղովի կատարած աշխատանքից, ցույց ե տալիս, թե ինչպես ե ազդում ման-

Շացման աստիճանը հարուստ և աղքատ քրոմիտներում յեղած Cr_2O_3 -ի
ոքսիդացման աստիճանի և արագության վրա:

Աղյուսակ № 3

Cr_2O_3 -ի հանքանում %	Հելացման ժամանակա- միջոցը	Մաղեր-ը	Անցրելի թիվը (պլ-ի- վար)	Ոքսիդաց- ման %	Cr_2O_3 -ի հանքանում %	Հելացման ժամանակա- միջոցը	Մաղեր-ը	Անցրելի թիվը (պլ-ի- վար)	Ոքսիդաց- ման %
56,3	20 բողեք	50	360	60,4	56,3	20 բողեք	90	1180	72,0
"	90 >	>	>	97,8	>	90 >	>	>	97,7
"	180 >	>	>	99,5	>	180 >	>	>	99,3
43,4	20 >	>	>	45	43,4	20 >	>	>	55,9
"	90 >	>	>	87,8	>	90 >	>	>	92,3
"	180 >	>	>	90,3	>	180 >	>	>	93,7
33,1	20 >	>	>	31,0	33,8	20 >	>	>	43,8
"	90 >	>	>	75,0	>	90 >	>	>	85,9
"	180 >	>	>	86,3	>	180 >	>	>	90,8
"	360 >	>	>	86,7	56,3	20 >	120	2304	78,0
56,3	90 >	120	2304	97,8	>	90 >	200	6400	98,6
"	180 >	>	>	99,5	>	180 >	>	>	99,3
43,4	20 >	>	>	64,9	43,4	20 >	>	>	87,4
"	90 >	>	>	95,4	>	90 >	>	>	95,4
"	180 >	>	>	96,2	>	180 >	>	>	95,7
33,1	20 >	>	>	55,0	33,1	20 >	>	>	84,8
"	90 >	>	>	91,5	>	90 >	>	>	94,5
"	180 >	>	>	93,3	>	180 >	>	>	95,0
56,3	20 >	200	6400	87,5					

Այս աղյուսակից կարելի յե անել հետեւյալ յեղակացությունը՝

1. Բոլոր տեսակի հանքերի համար մանրացումն արագացնում և
ոքսիդացման ռեակցիան:

2. Նույն ջերմաստիճանում նման մանրացման դեպքերում տար-
րալուծման տոկոսն աղքատ հանքերում ցածր ե, իսկ հարուստ հան-
քերում բարձր:

3. Տարրալուծման տոկոսը բարձրանում ե հանքի մանրացման աս-
տիճանի հետ միասին, զորտեղ մանրացումն ավելի սիծ նշանակություն
ունի աղքատ հանքերի համար, քան հարուստ հանքերի համար: Հա-
րուստ հանքերի համար մանրացման աստիճանը № 120 մաղեց բարձրաց-
նելու գեպքում տարրալուծման տոկոսը զործնականորեն չի մեծանում:

4. Մանրացումը մեծացնում է քրոմիտի աղդամն մակերեսը, հետևա-
պես ստացվելիք քրոմիտի տոկոսը:

5. Մանրացման աստիճանը մեծացնում ե ռեակցիայի արագու-
թյունը. ոքսիդացման տոկոսն աղքատ հանքերում ավելի բարձր ե լինում,
քան հարուստ հանքերում, չնայած այն բանին, զոր բացարձակ նշա-
նակությունն աղքատ հանքերում ավելի փոքր ե, քան հարուստ հան-
քերում:

ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՔՍԻԴԱՑՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1. ՀԱՆՔՈՒՄ ՅԵԼԱԾ Cr_2O_3 -ի ՔԱՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՔՍԻԴԱՑՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՎՐԱ

Ա. Պապովն իր կատարած փորձերի ժամանակ քրոմիտը և կերը
վերցրել ե հավասար կշռային հարաբերությամբ, իսկ սոդան վերցը ել
և թերթետիկ քանակով. շիկացումը կատարել ե 1100°-ում՝ տարրեր
ժամանակամիջոցներում: Ա. Պապովի փորձերի արդյունքը բերված ե
№ 4 աղյուսակում:

Աղյուսակ № 4

Cr_2O_3 -ի %-ը հան- քում	Ոքսիդացման ժամանակա- միջոցը	Ոքսիդացման %-ը	Cr_2O_3 -ի %-ը հան- քում	Ոքսիդացման ժամանակա- միջոցը	Ոքսիդացման %-ը
33,1	1,5 ժամ	75,0	43,4	3 ժամ	90,3
43,4	1,5 >	87,8	48,4	> >	98,2
48,4	> >	95,1	50,9	> >	99,0
50,9	> >	97,0	56,3	> >	99,5
56,3	> >	97,8			
33,1	3 >	86,3			

Այս աղյուսակից կարելի յե հետեւյնել:

1. Cr_2O_3 -ի քանակի մեծացման հետ միասին մեծանում և նույն
տարրալուծման տոկոսը:

2. Ոքսիդացման աղքատունը հարուստ հանքերում ավելի մեծ ե,
քան աղքատ հանքերում:

3. Ինչպես աղյուսակից յերեսում ե, ոքսիդացումը հիմնականում
վերջանում ե արգեն 1,5 ժամվա ընթացքում. հետագա ժամանակամի-
ջոցում, մինչև յերեք ժամ, տարրալուծման տոկոսը շատ աննշան չա-
փով ե մեծանում: Cr_2O_3 -ով աղքատ հանքերի համար տարրալուծման
տոկոսը, մինչև 3 ժամ շիկացնելիս, զգալի չափով մեծանում ե: Հետա-
գա ժամանակամիջոցը մեծացնելով՝ տարրալուծման տոկոսը չի բարձ-
րանում:

2. ԿՐԻ ՔԱՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՔՍԻԴԱՑՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպես տեսանք, կերը չի մասնակցում այն հիմնական ռեակցիային,
որը տեղի յե ունենում վառարանի մեջ, բայց նրա ներկայությունը
շիկացնելում (խառնուրդում) անհրաժեշտ ե: Կերը կամ վոլոմիտը թույլ չի
տալիս, վոր մասսան հալչի. մասսան կոշտացած զրությամբ չի ստաց-
վում, այդ ե պատճառը, վոր «լրացուցիչների» ներկայության գեպ-

Քում Cr_2O_3 -ի ոքսիդացման ռեակցիան արագանում եւ բացի այս, կիրք կամ զոլոմիտը շիկացած մասսան ծակոտկեն ե դարձնում, վորը հնշացնում ե ջրով մշակելու պրոցեսը:

Ծնորհիվ այս բանի, վոր Cr_2O_3 -ով աղքատ հանքերի դեպքում շիխտայում Cr_2O_3 -ի կոնցենտրացիան փոքր է, այդ պատճառով ել Cr_2O_3 -ի բոլոր մոլեկուլները չեն կարող 2 փոման մեջ մտնել Na_2CO_3 -ի մոլեկուլների հետ, ինտենսավես այս դեպքում ոքսիդացման ռեակցիայի արագությունը փոքր կլինի:

Ատոռեւ բերած № 5 և № 6 աղյուսակները ցույց են տալիս, թե կրի տարբեր քանակներն ինչպես են ազդում Cr_2O_3 -ի ռժսիդացման ռեակցիայի վրա (փորձերը կատարվում են 1100°C մասնիկած քրոմիտն անց և կացված № 120 մաղի միջով, շիխտան շիկացրել են 1,5 ժամ)։

Աղյուսակ № 5

$\text{Cr}_2\text{O}_3 \cdot \text{L}$ հանքում	Կրիկ և հանքի կշռային քա- սակների հա- րաբերու- թյունը	Սողայի քանակը	Ոքսիդացման %
33,1	0,2	Սողան վերց-	61,9
43,4	0,6	վում և թեր- ուածիկ քա-	95,0
56,3	1,0	նակալ	97,8

Զնայած շիխտայում Cr_2O_3 -ի կոնցենտրացիան յերեք զեպքում
ել հավասար է, ոքսիդացման տևկուն աղքատ, միջակ և հարուստ հան-
քերի նկատմամբ խոշոր չափով տարբերվում է:

Բերած յերկու աղյուսակներից հետևում է,

1. Աղքատ հանքերի համար կրի քանակը հանքի քանակի նկատմամբ հավասար պետք է լինի 0,8-ի, միջակ հանքերի համար՝ 0,9, հարուստ հանքերի համար՝ 1,2—1,3:

2. Կրի քանակը մեծացնում են Cr_2O_3 -ի քանակը մեծացնելու հետ միաժամանակ. կրի քանակի քիչ լինելու դեպքում շիխտան ունենում ե մակրեսային հալում:

3. Կրի քանակը մեծացնելու հետ միաժամանակ փոքրանում և սողայի և Cr_2O_3 -ի կոնցենտրացիան, հետևապես փոքրանում և նաև ոքսիգնացման արագությանը:

Աղյուսակ № 6

Տրամադրություն կազմում	Աքսիլացման տոկոսը	Կրիկ և հանքել գուային հա- բարերու- թյունը	Դիտողու- թյուններ
33,1	61,9	0,2	
»	80,4	0,4	
»	94,3	0,6	
»	96,5	0,8	
»	91,5	1,0	
»	89,6	1,2	
43,4	82,9	0,3	Հակիմիան- յան հարու- թյունի հա- մարդու
»	95,0	0,6	
»	97,7	0,8	
»	95,4	1,0	
»	93,0	1,5	
56,3	82,3		Շիլյան առևտնա- ման հա- մարդու
»	96,3		
»	96,5		
56,3	98,6		Մակերես- ապահով- ության հարու- թյունի հա- մարդու
»	99,5		
»	91,9		

Ինչպես տեսնում ենք՝ Cr_2O_3 -ով աղքատ հանքերը պահանջում են ավելի քիչ քանակությամբ կիր. այս բացատրվում է այն բանով, զոր հանքում յեղած կողմանակի հանքանյութերը (խառնուրդները) կատարում են այն դերը, ինչ զոր կիրն է կատարում։ Հարուստ հանքերի համար կրի քանակը սովորաբար ավելի պետք է վերցնել։

ՍՈՒՎՑԻ ՔԱՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՔՍԻԴԱՅՄԱՆ ԳՐՈՑԵՍԻ ՎՐԱ

Շիխտայում յեղած սոգայի վորոց մասը սեակցիայի մեջ և տանում քրոմիտում յեղած թթվային ոքսիդների հետ: Այս սեակցիան համեմատաբար ավելի բարձր ջրառաստիճանում և տեղի ունենում: Գոյանում են այսպես անվանված ալումինատներ, սիլիկատներ: Ալումինատների և սիլիկատների գոյացումը տեղի յե ունենում իհաշիվ քրոմիտի գոյացման: Այսպիսի սեակցիաները թուլացնում են քրոմիտի մեջ գտնվող Cr_2O_3 ի ոքսիդացման տոկոսը:

Ստորև բերված Ա 7 աղյուսակը ցույց է տալիս, թե ինչ ազդեցություն է թողնում սողան ոքսիդացման պրոցեսի վրա. այս փորձերի ժամանակ կիրան ամենի պակաս և վերցված, քան գործնականում են

վերցնում: Քրոմիտի մանրացումը կատարված ե այն չափով, զոր նրա մասնիկներն անցնում են № 120 մաղով. շիկացման ջերմաստիճանը յեղել ե 1100° C. շիկացման ժամանակամիջոցը՝ 1,5 ժամ:

Աղյուսակ № 7

Փորձերի համար համար №-ը	Cr ₂ O ₃ -ի հանքում % -ը	Ոքսիդացման տոկոսը	Կրի և հանքի քանակների թյունը	Պատճեկացման գույնը	Պատճեկացման գույնը
1	33,1	80,1	0,2	3	շիխտանտիել և մակերեսա- յին հալում
2	33,1	95,9	0,2	2	Շիխտան չի
3	33,1	96,3	0,2	1,5	հալում
4	33,1	61,9	0,2	1	Հիխտան չի

Առաջին փորձի ժամանակ շիխտան տվել ե մակերեսային հալում այն պատճառով, զոր սողայի քանակը շիխտայում շատ մեծ ե յեղել — թեորետիկ քանակի զիմաց վերցվում ե 3 անդամ ավելի: Առաջին փորձի արդյունքն այն ե, զոր ոքսիդացման տոկոսը բավականին ցածր է: Յերկրորդ և յերրորդ փորձերի ժամանակ ոքսիդացման տոկոսն աչքի ընկնող չափով մեծանում է, իսկ չորրորդ փորձի ժամանակ ոք-սիդացման տոկոսը նորից ընկնում է: Այս փորձերը ցույց են տալիս, զոր իրաք շիկացման ժամանակ սողայի վորոշ մասը ծախսվում է սիլիկատներ, ալումինատներ գոյացնելու համար: Յերբ սողայի քանակը հավասար է թեորետիկ քանակին, ոքսիդացման տոկոսը շատ փոքր է լինում, այն ե՝ 61,9 %: Ինչպես փորձերը ցույց են տալիս, գոյացած CaCrO₄-ը՝ ալումինատները, սիլիկատները, ֆերիտները, բարձր ջերմաստիճանում տարրալուծվելով ռեակցիայի մեջ են մտնում սողայի հետ՝ գոյացնելով ջրում լավ լուծվող նատրիումոնոքրոմատ: Վոր-պեսզի ոքսիդացման տոկոսը բարձր լինի, այդ դեպքում անհրաժեշտ է հարուստ հանքերի համար ավելի քիչ սողա վերցնել, քան աղքատ հանքերի համար: Ընդհանրապես կարելի յե ձեռակերպել հնտեկալ կերպ՝ սողայի քանակը պակասեցնելու հետ միասին պակասում ե նաև ոքսիդացման տոկոսը:

Խառնուրդների ազդեցությունն ոքսիդացման պրոցեսի վրա ցույց տալու համար կատարված են մի շարք փորձեր, զորոնց ավարտները բերված են № 8 աղյուսակում: Փորձի համար վերցված ե քրոմիտի այնպիսի մանրվածք, զորն անցկացված ե № 120 մաղով. փորձի ջերմաստիճանը յեղել ե 1100°, իսկ շիկացման ժամանակամիջոցը՝ 1,5 ժամ:

Աղյուսակ № 8

Cr ₂ O ₃ -ի հանքում % -ը	Ոքսիդացման % -ը	Կրի և հանքի քանակների թյունը	Պատճեկացման գույնը
33,1	81,5	1,0	0,6
>	86,9	>	0,8
>	91,5	>	1,0
>	92,3	>	1,2
56,3	88,0	>	0,6
>	93,5	>	0,7
>	97,7	>	1,8
>	97,8	>	1,0

Այս բոլոր ասածներից կարելի յե անել հետևյալ հետեւթյուն-ները:—

Կրի ազդեցությանը հետեւյալ ե:

1. Կիրը չեղոքացնում ե զատարկ հանքանյութերը, այսինքն՝ սո-դայի ծախսումը փոքրանում է:

2. Դադարեցնում ե շիխտայի մակերեսային հալումը և միաժամա-նակ ստեղծում է ծակոտկեն գրություն:

Սոգա. Շիխտայում սողայի քանակը պետք ե մոտավորապես հավա-սար լինի թեորետիկ քանակին, սակայն վոչ ավելի, քան այդ քանակը:

ԱՆՔԱՏ ՔՐՈՍԻՏԻ ԴԵՊՈՒՄ

1. Ինչքան կարելի յե քրոմիտը լավ մանրացրած պետք ե լինի:

2. 30—40 % Cr₂O₃ պարունակող քրոմիտի դեպքում կրի քանակը հանքի քանակի հանդեպ պետք ե լինի 0,8:

Սողայի քանակը պետք ե հավասար լինի թեորետիկ քանակին:

4. Շիկացած ժամանակամիջոցն այս դեպքում ավելի յերկար պետք ե լինի, քան Cr₂O₃ հարուստ հանքերի դեպքում:

5. Ջերմաստիճանը պետք ե լինի մոտ 1200°:

ՀԱՐՈՒՏ ՔՐՈՍԻՏԻ ԴԵՊՈՒՄ

1. 40—50 % Cr₂O₃ պարունակող քրոմիտի դեպքում կրի քանակը հանքի քանակի հանդեպ պետք ե լինի 0,9:

2. 50 % բարձր Cr₂O₃ պարունակող քրոմիտի դեպքում կրի քա-նակը հանքի քանակի հանդեպ պետք ե լինի 1,2—1,3:

3. Շիկացման ժամանակամիջոցն ավելի փոքր պետք ե լինի, քան աղքատ քրոմիտի դեպքում:

4. Այդպիսի քրոմիտը համարյա լրիվ ոքսիդացնելու համար ջեր-մաստիճանը պետք ե լինի մոտ 1100°:

ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐԸ ԽԱՌՆԵԼԸ

Կոպոնենտներն իրար հետ խառնելիս պետք է աշխատել ինչքան կարելի յեւ լավ խառնել, վորպեսզի իրար հետ ավելի լավ շփվեն, հեշելով այն, վոր քիմիական ռեակցիան տեղի յեւ ունենում այնտեղ, վորտեղ առանձին կոմպոնենտները շփվում են իրար հետ:


ՎԱՐԱՐԱՆՈՒՄ ՅԵՂԱԾ ՄԱՍՍԱՆ ԽԱՌՆԵԼԸ

Մասսայի հաստությունը վառարաններում սովորաբար 10—15 սանտիմետրի յեւ հասնում: Այդ պայմաններում թթվածինը չի կարող ավելի խորը թափանցել, հետևապես ոքսիդացումը չի կարող լրիվ լինել. այդ բանի դեմք առնելու համար անհրաժեշտ է մասսան խառնել: Խառնելու գեղքում ներքեռում գտնվող շերտը բարձրանում է շատ հաճախ վերև, շփվելով թթվածնի հետ յենթարկվում ե ոքսիդացման և, բացի այս, նաև անհրաժեշտ չափով շիկանում ե: Խառնելուց հետո վառարանում յեղած մասսայի մակերեսը հարթ չպետք է լինի, այլ պետք է լինի ալիքածեն. այս գեղքում շփման մակերեսն ողի հետ՝ ավելի մեծ է լինում:

ԹԹՎԱԾՆԻ ՔԱՆԱԿԸ


Ոքսիդացման համար խորոր նշանակություն ունի հնոցից դուրս յեկող զաղերի մեջ գտնվող թթվածինը, վորն անմիջապես ռեակցիայի մեջ և մտնում Cr_2O_3 ի հետ: Ինչքան շատ ե լինում հնոցից դուրս յեկող զաղերի մեջ թթվածնի քանակը, նույնքան ավելի արագ է հասնում իր զերջնական կետին՝ ռեակցիան:

Ինչպես տեսանք, շիխտայի մեջ, բացի քրոմիտից և սոդայից, մտցընում են նաև կիր. կրի գերը հետևյալն ե. սողան հալվում է 800⁰-ում և, բացի այս, գոյացած Na_2CrO_4 -ը նույնպես հալվում է ցածր ջերմաստիճանում, այն է 763⁰: Շիխտայում յեղած կիրը ծծում է հալված սուկան և նատրիում մոնոքրոմատը. հետևանքը լինում է այն, վոր մասսան չոր և փխրուն և մնում—մինչև շիկացման վերջը պահպանում է ողի թթվածնի կողմից ոքսիդանալու ընդունակությունը: Բայց այնուամենայնիվ կրի վորոշ մասը ռեակցիայի մեջ է մտնում քրոմիտի հետ՝ գոյացնելով ջրում դժվար լուծվող CaCrO_4 :



CaCrO_4 -ի քանակը շիկացած մասսայի մեջ յերբեմն հասնում է ամբողջ Cr_2O_3 -ի քանակի 10⁰/₀-ին: Շնորհիվ այն բանի, վոր CaCrO_4 -ը շատ քիչ է լուծվում ջրի մեջ, մասսան ջրով մշակելիս CaCrO_4 -ի մեծ մասը մնում է ատվալի մեջ, վորով պայմանավորված է քրոմիտի մեծ կորուսոց:

Գերմանական մի խոշոր գործարանում, պատվող վառարանում նատրումական քրոմակիլ ստանալու համար, կրի փոխարեն վերցրել են գործումիտ, գոլոմիտով աշխատելիս վառարանում CaCrO_4 -ի հետ գոյանում ե նաև MgCrO_4 , վորն ավելի անկայուն ե և շատ հեշտությամբ յենթարկվում ե տարրալուծման:



CaCrO_4 -ի տարրալուծումն սկսվում է 930⁰-ից, իսկ MgCrO_4 -ը տարրալուծվում է 580⁰—650⁰-ում:

Համաձայն № 1 դիագրամի՝ 1050⁰ և 1160⁰ աստիճաններում ոքսիդացման տոկոսը գոլոմիտային շիխտայում քիչ մեծ է, քան կրային շիխտայում 830⁰-ում և հատկապես 930⁰-ում արդեն Cr_2O_3 -ի ոքսիդացումը գոլոմիտային շիխտայում ավելի փոքր է, քան կրային շիխտայում, ինչպես, որինակ, գոլոմիտային և կրային շիխտան 4 ժամ շիխտայում ոքսիդացման տոկոսը յեղել է 60⁰/₀. 930⁰-ում ոքսիդացման տոկոսը գոլոմիտային շիխտայում յեղել է 80⁰/₀, իսկ կրային շիխտայում 930⁰-ում յեղել է մոտ 86,5⁰/₀. 1160⁰-ում պատկերը բոլորով վին փոխվում է. գոլոմիտային շիխտայում ոքսիդացումը մի ժամում յեղել է 99,92⁰/₀, իսկ կրային շիխտայում 96,98⁰/₀: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ոքսիդացման ռեակցիայի արագության մեջ մենք տեսնում ենք, վոր ոքսիդացման ռեակցիայի արագության մեջ մենք չենք շահի, յեթե գործ ունենանք այնպիսի շիխտայի հետ, վորն իր մեջ պարունակում է վոչ թե կիր, այլ գոլոմիտ: Մյուս կողմից՝ պրոֆ. Յովշիկիչի բազմաթիվ փորձերը ցույց են տալիս, վոր գոլոմիտային շիխտայի գեպօւմ ջրում լուծվող քրոմիտաներն իրենց քանակով ավելի շիխտայի գեպօւմ ջրում լուծվող քրոմիտաներն իրենց քանակով ավելի շատ են, քան կրային շիխտայի գեպօւմ, հետևապես քրոմիտ կորուսարը գոլոմիտային շիխտայում ավելի փոքր է, քան կրային շիխտայում: Դիմումիտի շիխտային շիխտայում այս հետեւանք ե այն բանի, վոր բարձր ջերմաստիճանական մասը տեսանք մեջ կրի փոխարեն գոլոմիտ ենք մտցնում, ճառը, վար յերբ շիխտայի մեջ կրի փոխարեն գոլոմիտ ենք մտցնում, CaCrO_4 -ի ավելի կայուն ե քան MgCrO_4 -ը: Այս ե պատճենում CaCrO_4 -ն ավելի կայուն ե քան MgCrO_4 -ը:

0 ⁰ -ում 4,31%	50 ⁰ -ում 1,11%
20 ⁰ -ում 2,23%	70 ⁰ -ում 0,80%
30 ⁰ -ում 1,92%	100 ⁰ -ում 0,42%

Ինչ վերաբերում է MgCrO_4 -ին, այն համարյա թե բոլորվին չի դառնվում շիկացած մասսայի մեջ, վորովհետև շիկացման ժամանակ բարձր ջերմաստիճանում MgCrO_4 -ը հեշտությամբ տարրալուծվում է: Դոլոմիտային շիխտան հետևյալ առավելություններն ունի. 1) Մասսան

մակերեսային հալում չի տալիս. 2) Գոյանում և համեմատաբար ավելի քիչ քանակի ջրում դժվար լուծվող CaCrO_4 , հետևապես քրոսի կորուստն ավելի քիչ և լինում:

ՔՐՈՍԹԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ՔՐՈՍԹԻԾԻ ՀԱՐՍԱՑՈՒՄԸ

Յեթե հանքից դուրս բերված քրոմիտն աղքատ է, անհրաժեշտ է նախորոք յենթարկել նախնական մշակման—այդպիսով հարստացնել Հարստացման հիմնական նպատակն է քրոմային յերկաթից անջատել դատարկ հանքանյութերը. հեռացնելով դատարկ հանքանյութերը՝ հիմնական նյութի մեջ մեծանում է քրոմային յերկաթի տոկոսը:


Քրոմային յերկաթը հարստացնում են հետեւյալ կերպ. աղքատ քրոմիտի կտորները նախ մանրացնում են քարկոտրիչ թլեկ սիստեմի մեջենայով, վորից հետո՝ գնդավոր աղացով, հատիկների մեծությունը հասցնելով ավազի հատիկների մեծության: Մանրացրած կտորները թլեկ սիստեմի քարկոտրիչից թափվում են գնդավոր աղացի մեջ, վորտեղ մանում և նաև ջրի հոսանք, գնդավոր աղացից դուրս յեկող քրոմիտի մանր կտորները լցվում են կոնցենտրատոր կոչվող սեղանի վրա: Այս սեղանը ներկայացնում է թեք հարթություն, վորի վրա տեղի յի ունենում քրոմիտի հարստացումը: Սեղանի աշխատանքի պլինցիպը հետեւյալն ե—մանրացած քրոմիտն այստեղ բաժանվում է յերկու շերտի: Ներքենում նստում ե ծանր քրոմիտը, վորին կոնցենտրատ անունն են տալիս, իսկ վերենում նստում են ավելի թեթև դատարկ հանքանյութերը, վորոնք անվանվում են պոչ: Եթետավորումը կատարվում է սեղանի մասնակի տատանման շնորհիվ. Ջրի հոսանքը թեթև կտորները տանում և ավելի հեռու, իսկ ծանր կտորները՝ համեմատաբար մոտիկ. այսպիսի հարստացման դեպքում ստացվում է մի քանի կոնցենտրատ: Այդ յեղանակով հարստացնում են այնպիսի քրոմիտ, վորի մեջ Cr_2O_3 -ի տոկոսը 35%-ից ավելի ցածր է. ստացված կոնցենտրատները պարունակում են 40%—50% Cr_2O_3 :

ՔՐՈՍԹԻԾԻ ՉՈՐԱՑՈՒՄԸ

Քրոմիտն անհրաժեշտ է չորացնել հատկապես այն նկատառումով, վոր հետագայում մանրացման պրոցեսն ավելի հաջող ընթանա: Նախնական չորացման յենթարկում են այնպիսի քրոմիտ, վորի մեջ խոնավությունը հասնում է 5—10%-ի (հանքից ստացված քրոմիտի կտորները սովորաբար պարունակում են մինչև 5% քրոմիտ, իսկ կոնցենտրատը պարունակում է 8—10% խոնավություն):

Ուրալի նոր գործարանի չորացման բաժնում դրված է Հումբոլտի ֆիրմի մեխանիզացիայի յենթարկված պլիտավոր չորացնոց (տես նկ. 2):

Չորանոցի յերկարությունը 14 մետր է, լայնությունը 2,6 մետր. տաքացվում է ներքենց՝ հատուկ հնոյից դուրս յեկող տաք գազերով: Քրոմիտն առաջ շարժելու և միաժամանակ խառնելու համար կա հատուկ հարմարություն: Չորանոցի արտազրողականությունը մեկ ժամում հասնում է 2—3 տոննի: Նման չորանոցում չորացնելուց հետո քրոմիտը պարունակում է 1% խոնավություն. վառելանյութ (քարա-



Նկ. 2.


ծուխ) ծախովում է (10% խոնավության դեպքում) ամբողջ արտադրանքի հինգ տոկոսի չափով: Պահեստից քրոմիտը չորանոցի մուտքան լցվում է տարած հատուկ վագոննետների ողնությամբ, ապա բահերով լցնում են չորանոցի վրա. քրոմիտը և տաք գազերը շարժվում են միենույն ուղղությամբ: Չորանոցի մյուս ծայրից չորացած քրոմիտը լցվում է տրանսպորտյորի վրա. այս ել տեղափոխելով լցնում ե ելեվատորի մեջ, վորը բարձրացնելով նյութը՝ լցնում է բունկերի մեջ, իսկ յեթե կտորները բավականին մեծ են, նախքան ելեվատորի մեջ լցվելը՝ քրոմիտը լցվում է շարժվող պողպատյա ճաղերի վրա, վորտեղ մանր կտորները ճաղով անցնում և լցվում են ելեվատորի մեջ, իսկ ավելի մեծ կտորներն անցնելով թլեկ սիստեմի քարկոտրիչի միջով՝

Թանրանում են 30 մմ մեծություն ունեցող կտորների չափ, վորը նույնականացնելու հետ ուղղակի ոգնությամբ լցվում է քրոմիտի համար պատրաստված բունկերի մեջ:

ՀՈՒՄՈՒՅԹԻ ՄԱՆՐԱՑՈՒՄԸ

ՔՐՈՄԻՏԻ ՄԱՆՐԱՑՈՒՄԸ


Ոքորդացման պրոցեսը վառարանում հաջող ընթանալու համար անհրաժեշտ ե քրոմային յերկաթը հնարավոր չափով լավ մանրացնել: Չոր քրոմիտը նախ մանրացնում են թիեզ սփայքեմի բարկութիչ (կամենօդրոնիլեկ) մեքենայով:




Նկ. 3. Քարկոտրիչ թիեզի արտաքին տեսքը

Քրոմիտի կտորները լցնում են շարժվող ձաղերի վրա. 30 միլիմետրից փոքր արամագիծ ունեցող կտորները, շարժվող ցանցի միջից անցնելով, լցվում են ելաստորի մեջ, իսկ ագելի մեծ արամագիծ ունեցող կտորները, լցվելով քարկոտրիչ թիեզի մեջ, մանրանում են 30 միլիմետր արամագիծ ունեցող կտորների չափ, վորից հետո լցվում են ելաստորի մեջ:

Թիեզ սփայքեմի քարկոտրիչը հետևյալ կազմությունն ունի: Քարկոտրիչում նյութը մանրացվում է ակսո ունեցող յերկու ծնոտների մեջ. այս ծնոտներն իրար նկատմամբ վորոշ անկյան տակ են դասավորված. ծնոտներից մեկն անշարժ է, իսկ մյուսը՝ շարժական: Շարժական ծնոտը հատուկ սալիք (պլիտա) ոգնությամբ միացած է շարժաթեր (շատուն) հետ, վորն եքսցենտրիկ կերպով նստած է թափանվի առանցքի վրա (տես նկ. 3, 4 և 5):





Նկ. 4. Քարկոտրիչ թիեզի կառույթաձեռնություն



Թափանվի առանցքի վրա եքսցենտրիկ կերպով նստած շարժաթելը շարժվելով՝ շարժում է նաև շարժվող սալը, հետևապես և նրա վրա ամրացրած ծնոտը, այնպես վոր շարժվող ծնոտը մեկ մուենում է և մեկ հեռանում է անշարժ ծնոտից: Քրոմիտի կտորները լցնում են վերևի անցքից, շարժվող և անշարժ ծնոտների մեջ այդ կտորները մանրանում են և ներքեւ անցքով դուրս են գալիս թեք ճոռի (ժելոբ) ոգնությամբ և լցվում են ելեկատորի մեջ:

Քարկոտրիչ բեկը կազմված է՝ չուկունյա պատյանից, առանցքի վրա նստած և յերկու փոկանիվ (2) — բանողական և պարապ (սին) ընթացքի համար, վորը պառյատ և ստանում հատուկ արանսմխիայի ոգնությամբ, յերկու թափանիվ (3), վորոնք ղեկավարում են քարկոտրիչի համաշափ շարժումը, առանցքին եքսցենտրիկ շրջանակ 4-ի ոգնությամբ միացած և շարժաթել-5-ը: Ներքեցից շարժաթելը չուգունե հատուկ սալի (6) ոգնությամբ միացած և շարժվող պլատայի (7) հետ, վորն ամրացած և առանցք 8-ին, իսկ մյուս կողմից՝ սալ 6-ի ոգնությամբ միացած և հատուկ հարմարանքի (14) հետ, վորի նշանակության մասին կխոսենք ստորև: Սալ 7-ի հետ ամրացված և շարժվող ծնոտ 9-ը, յերկորոր ծնոտը (10) անմիջապես միացած և քարկոտրիչի պատյանի հետ: Ներքեցից շարժվող սալը միացած և զսպանակ 12-ի հետ, վորի նշանակությունը հետևյալն է: յերբ շարժվող սալը շարժվում է առաջ, անհրաժեշտ ե, վոր նորից յետ գա: շարժվող սալը յետ և ձգում զսպանակ 12-ը, բացի այս, զսպանակը սիստեմը պահպանում է հավասարակոռության մեջ և արգելվ է հանդիսանում սալ 6-ին՝ իր անցքից դուրս գալու: Յերկու ծնոտների մեջ յեղած ներքեւի անց-




Նկ. 6. Ելեկատոր:

Քը կարելի յե վորոշ սահմանում կանոնավորել. այդ կանոնավորումը տանում են հատուկ հարմարանքի (14-ի) միջոցավ, վորը գտնվում ե քարհոտրիչի յետևի մասում: Այդպիսի քարկոտրիչների արտադրողականությունը մի ժամում համում ե 2—3 տոննի, իսկ գիգանտ տեսակների արտադրողականությունը համում ե մինչև 600 տոնն/ժամ:

Քարկոտրիչ Բլեկից մանրացած քրոմիտն ելեատորի ոգնությամբ (տես նկ. 6) բարձրանում ե և լցվում բունկերի մեջ:

Ելեատորը կազմված ե մի շարք շերեփներից (կովշ, գուշ) (1), վորոնք վորոշ հեռավորության վրա ամրացված են յերկու անվերջ շղթայի (2) հետ, այս շղթաները վերևից ու ներքեւից հենված են 3 և



Նկ. 7. Գնդավոր աղացե արտաքին տեսքը:

4 ատամնավոր անիվների վրա. Ելեատորն իր շարժումն ստանում է վերևի ատամնավոր անվից, իսկ այս ել հատուկ տրանսմիսիայի ոգնությամբ շարժումն ստանում ե ելեկտրական մոտորից: Կան ելեատորներ, վորտեղ շերեփները միացված են վոչ թե շղթայի, այլ անվերջ ժապավենի:


Բունկերից քրոմիտն ափսեյած մատուցողի ոգնությամբ լցվում է գնդավոր աղացի մեջ կամ յերբեմն ել վազկանի (բեգուն) մեջ. այս տեղ քրոմիտը յենթարկվում ե վերջնական մանրացման:

Գնդավոր աղացը ներկայացնում ե (տես նկ. 7) հորիզոնական առանցքի վրա պտավող գլան (առանցքը չի անցնում գլանի կենտրոնով), վորի մեջ լցված են տարբեր մեծություն ունեցող հատուկ պողպատից

(մարգանեցային պողպատ կամ քրոմային պողպատ) պատրաստված գնդերը Գնդերի արամագիծը 5—10 սանտիմետր ե. գլանը ներսից ծածկված ե հատուկ պողպատից պատրաստած սալերով (մաշվելիս այդ սալերը կարելի յե հեղտությամբ փոխել). գլանը բաժանվում ե յերկու մասի. յուրաքանչյուր մասն ունի ցանց, առաջին բաժնի ցանցի ծակոտիներն ավելի մեծ են, քան յերկորդ բաժնի ցանցի ծակոտիները: Տարբեր բաժինները լցնում են տարբեր մածությամբ գնդեր. առաջին մասը լցնում են մեծ գնդեր, իսկ յերկորդ մասը՝ ավելի փոքր գնդեր Գնդավոր աղացը շատ արագ ե պտըտվում և գնդերի հարվածների շնորհիվ քրոմիտը մանրանում ե: Քրոմապիկի արտադրության մեջ գործածվող Հումբոլտի սիստեմի աղացի յերկարությունը 6 մետր ե, տրամագիծը՝ 1,7 մետր, կշիռը՝ 106,4 տոնն. աղացի մեջ յեղած քրոմիտի կշիռը 10 տոնն ե: Աղացը պտավում ե ատամնավոր անիվների ոգնությամբ. ծախսվում ե 220 ձիաուժ. պտույտների թիվը մեկ րոպեյում հասնում ե 23-ի:

Գնդավոր աղացից մանրացրած քրոմիտն ելեատորի ոգնությամբ բարձրանալով լցվում ե սեպարատորի մեջ, վորտեղ տեղի յե ունենում ոդային մաղում. ստացվում ե այնպիսի մաղվածք, վորն անցնում ե այնպիսի մաղով, վորի 1 սմ² վրա կա 4900 անցք, իսկ ավելի մեծ կտորները (մոտ 10—12%) հատուկ խողովակի ոգնությամբ յետ են գանգովոր աղացը՝ վերստին մանրանալու համար:

Ոդային սեպարատորը ներկայացնում ե (տես նկ. 8) արտաքին բունկեր A, վորի ներքեւի մուսը կօնածն ե. այս բունկերի ներսում գտնվում ե յերկորդ B բունկերը: Քրոմիտը սեպարատորն ե մտնում հատուկ ձագարի ոգնությամբ. սեպարատորի մեջ ողի հոսանք ստեղծվում ե P պրոպելլերի ոգնությամբ, վորը հատուկ մեխանիզմի միջոցով ե շարժում ստանում. պրոպելլերը մեկ րոպեյում կատարում ե 240 պտույտ: Պրոպելլերի շնորհիվ ստեղծված ողի հոսանքն իր հետ տանում ե քրոմիտի ամենափոքրիկ թեթև հատիկները. կենաքրանախաւյս




Նկ. 8. Սեպարատոր:

ուժի շնորհիվ փոշու հատիկները ձգվում են Ա բունկերի պատե րին վրատեղից աստիճանաբար իջնում են ներքեւ և Կ անցքով դուրս գաւ լիս ու լցվում շնիկի մեջ, վերջինս ել մանրացրած քրոմիտը տանում լցնում ե քրոմիտի բունկերի մեջ: Ցանկացած չափով փոշիացած քրոմիտը, լինելով ավելի ծանր, լցվում ե Բ բունկերի ներքեւի մասը և է անցքից դուրս գալով՝ նորից յետ ե դառնում գնդավոր աղացը — վերստին մանրանալու համար: Գնդավոր աղացի արտադրողականությունը մեկ ժաման 3—3,5 տոնն ե:

Գնդավոր աղացը կարելի յե փոխարինել գաղկանով (տես նկ. 9) առանցքի վրա նստած ե ա հաղորդիչ փոկանիվը, վորը շարժման մեջ ե գնում մեկ շարք ե և ս ատամնավոր անիմսերը, իսկ վերջիններս ելուզզա-

հայաց առանցքի ողնությամբ շարժման մեջ են դնում յերկու չուզունե ծանր անիմսերը (վագկանները). վերջիններս կատարում են ջրջանածե շարժում. անցնելով հատակին գտնվող քրոմիտի վրայով՝ մանրացնում են այն. գաղկանն արտաքուստ ծածկված ե յերկաթյա պատյանով, վորն ունի անցք՝ քրոմիտը լցնելու համար: Մանրացած քրոմիտը գաղկանի հատակում գտնվող հատուկ անցքից, վորը ծածկված է ցանցով, իսկ անցքի վրա կամ կերպության մեջ առանձին-առանձին կունենանք՝ քրոմիտ, գոլոմիտ կամ կիր, սողա և արտադրության փոշին կամ արտադրության մասորդը (առավալը):



Նկ. 9. Բեզուն.

Ե ցանցով, իջնում ե ներքեւ և ելեատորի ոգնությամբ բարձրանում ու լցվում ե սեպարատորը կամ գլանածե պատվող մաղը: Գլանածե մաղն ունի յերկու ցանց. ներսի ցանցի անցքերը խոշոր են, և ցանցը պատրաստված ե յերկաթյոց. արտաքին ցանցի անցքերն ավելի մանր են. այս ցանցը պատրաստված ե պղնձից կամ բրոնզից: Մանրվածքն անցնելով արտաքին ցանցով՝ հավաքվում է ընդունիչի մեջ, այստեղից ել ելեատորի ոգնությամբ բարձրանում և լցվում քրոմիտի բունկերի մեջ, իսկ այն կարոները, վորոնք խոշոր են և արտաքին ցանցով չեն անցել, հատուկ խողովակի ոգնությամբ յետ են դառնում և լցվում վաղկանի մեջ՝ վերստին մանրանալու համար: Վաղկանի որական արտագրանքը 6—6,5 տոնն ե:

ԴՈԼՈՄԻՏԻ ԿԱՄ ԿՐԻ ՄԱՆՐԱՑՈՒՄԸ

Դոլոմիտի կամ կրի մանրացման մեխանիզմը մնում է նույնը, ինչ վոր քրոմիտի գեպը ունի եր սիայն այն տարբերությամբ, վոր այս նյութերն անհրաժեշտ չե մանրացնել այն ձևով, ինչպես քրոմիտն են մանրացնում, ենտեապես սեպարատորն իր նշանակությունն այստեղ կորցնում ե: Գնդավոր աղացից գոլոմիտը կամ կիրն ելեատորի ոգնությամբ բարձրանում և լցվում են համապատասխան բունկերների մեջ:

ՍՈԴԱՑԻ ՄԱՆՐԱՑՈՒՄԸ

Սոդան արտադրություն ե գալիս փոշիացած վիճակով, հատուկ պարկերի մեջ. ողի խոնավության ազգեցությամբ սոդայի վորոշ մասը վեր և ածվում գնդիկների. այս և պատճառը, վոր սոդան, նախ քան շիմտայի մեջ մտցնելը, անհրաժեշտ ե մանրացնել: Սոդան մանրացնում են բառնցքավոր աղացում: Մանրացրած սոդան ելեատորի ոգնությամբ բարձրանում ու լցվում ե սոդայի բունկերը: Այսպիսով չորս բունկերների մեջ առանձին-առանձին կունենանք՝ քրոմիտ, գոլոմիտ կամ կիր, սոդա և արտադրության փոշին կամ արտադրության մասորդը (առավալը):

ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐԻ ԽԱՌՆՈՒՄԸ

Եկատնիզացիայի չենթարկված գործարաններում, ինչպես նաև ճին ժամանակներում, կոմպոնենտներն իրար հետ խառնում ենին ձեռքով, բահերի ոգնությամբ: Այդ անում են հետևյալ ձևով. հասարակ ձեռքով վերցնում են վորոշ քանակով քրոմիտ, կիր, սոդա և ատգար, հարթ հատակի վրա նախ փուռմ են սոդան, ապա կիրը, հետո ատգալը, իսկ ամենից վերև՝ քրոմիտը. այսպիսով պատրաստում են մի կույտ. այդ կույտը բահերի ոգնությամբ մի տեղից մյուսին են տեղափոխում, և այդ ժամանակ կոմպոնենտները խառնվում են իրար հետ. այս պրոցեսը կատարում են 3—4 անգամ. ատացվում ե համասեռ զանգված. այդ համասեռ մասսան փայտե խարակների ոգնությամբ տեղափոխում են և լցնում վառարանի վերևը զրված ձագարը, վորտեղից ե լցնում են վառարանը: Այս կիրպ խառնելն ունի հետևյալ բացասական կողմերը. 1) խառնելը թանգ ե նստում, 2) ծանր բանվորական աշխատանք ե կատարվում, ինչպես նաև հակառաողջապահական պայմաններ են առաջանում, 3) խառնումը վատորակ ե լինում, և այդ պատճառով վառարանում ոքսիզացման տոկոսը ցածր ե լինում:

Նորագույն տեխնիկայով կառուցված զործարաններում խառնելու պրոցեսը մեքենայնացված ե, քրոմիտի, գոլոմիտի կամ կիրի, սոդայի և

փոշու կամ ատվալի բունկերների տակ դրված ե ավտոմատ կշեռք-
սովորաբար յուրաքանչյուր անգամ այդ կշեռքը կշռում ե (այս ավցար-
ները վերցված են Ուրալի նոր գործարանից) —

Քրոմիտ 30—45 կգ,
Դոլոմիտ 50—75 կգ,
Սոդա 20—30 կգ,
Փոշի 15—20 կգ,

Յուրաքանչյուր այսպիսի ավտոմատ կշեռք մի ժամում կշռում ե
100 անգամ: Կշեռքների ընդհանուր արտադրանքը 8 ժամում 60 տոնն
շինուած յեւ:

Կշեռքած նյութերը թափվում են աջ և ձախ պտտվող շնիկի մեջ.
Նյութերն այստեղ վորոշ չափով խառնվում են. շնիկի մեջտեղը գտնվող
ճողի ոգնությամբ նյութերը լցվում են կրկնակի շնիկի մեջ (շնիկն
ունի յերկու առանցք, վորից մեկը պտտվում է աջ, իսկ մյուսը՝ ձախ):
Նյութերը կրկնակի շնիկի մեջ լավ խառնվում են և միաժամանակ
առաջ են շարժվում. արդեն պատրաստի շինուած լցվում ե եկատորի
մեջ, վորը վերջինս բարձրացնելով լցնում ե շինուածի համար պատ-
րաստված բունկերի մեջ: Բունկերի տակ հարմարեցված ե ափսեյաձև
մատուցող, վորը շինուած տրանսպարտիորի ոգնությամբ լցնում ե
եկատորի մեջ, իսկ այս վերջինս ել շինուած բարձրացնելով լցնում ե
վառարանի վերևում զրված բունկերի մեջ, իսկ այստեղից ել ավտոմատ
կշեռքի ոգնությամբ շինուած լցնում են վառարանը:


Նկ. 10-ը ներկայացնում ե Ուրալի քրոմիտիկի նոր գործարանի
մանրացման ցեխի սքեման:

(4) վագոնեատ լցված քրոմիտով կամ գոլոմիտով, վագոնեատից քրոմիտը
կամ գոլոմիտը լցնում են յերկաթյա ցանցի (5) վրա, վորը վորոշ մե-
ծության կտորները բաց ե թողնում, իսկ ավելի մեծ կտորները ձեռքի
մուրճով կոտրում են: Նյութն այստեղից լցվում ե շարժվող ցանցի
վրա (6), վորտեղ մեծ կտորները մանրերից ջոկվում են: 30 միլիմետ-
րից փոքր տրամագիծ ունեցող կտորները ցանցից անցնելով՝ լցվում
են եկատոր 8-ի մեջ, իսկ զրանից մեծ կտորները քարկոտրիչ բլեկի
մեջ անցնելով մանրանում են և ապա լցվում եկատոր 8-ի մեջ, վորն
իր հերթին նյութը բարձրացնելով լցնում ե բունկեր 9-ի մեջ (յերկու
այսպիսի բունկեր ել լինում—մեկը քրոմիտի, իսկ մյուսը՝ գոլոմիտի
համար). այստեղից նյութը լցվում է գնդավոր աղաց 12-ի մեջ՝ սնուցիչ
(ուտառել) 10-ի ոգնությամբ: Մանրացրած քրոմիտը տրանսպարտիոր
13-ի ոգնությամբ լցվում է եկատոր 14-ի մեջ, իսկ այստեղից ել
սեպարատոր 15-ի մեջ. մեծ կտորները մանր կտորներից ջոկելու համար
մանր կտորները տրանսպարտիոր 16-ի ոգնությամբ լցվում են քրո-
միտի բունկեր 17-ի մեջ, ավելի մեծ մասնիկները խողովակ 11-ի ոգ-

Քեալի
Ժառան

12


Բետա. Ֆիլտրից ստացված
վիոչին



նությամբ նորից յետ են դառնում գնդավոր աղացի մեջ։ Դոլոմիտն առանց սեպարատորի մեջ անցնելու 140 ելեատորի ոգնությամբ լցվում ե բունկեր 18-ի մեջ։ սոդան բուռնցքավոր աղացում (32) մանրանալուց հետո բարձրանում և լցվում ե սոդայի բունկեր 20-ի մեջ, իսկ փոշին, վորը հավաքվում ե արտադրության առանձին մասերից, լցվում ե բունկեր 19-ի մեջ։ 21 ավտոմատ կշեռք, 22 ձախ և աջ ընթացքով շնիկ, 23 խառնող կրկնակի շնիկ, պատրաստի շիխտան ելեվատոր 24-ի ոգնությամբ բարձրանում և լցվում ե 2 բունկեր 25 և 26-ի մեջ, 27 ափսեյածե մատուցող, տրանսպարտիոր 28-ի ոգնությամբ լցվում ե ելեատոր 29-ի մեջ, իսկ այս վերջինս ել քրոմիտը կամ դոլոմիտը բարձրացնելով լցնում և բունկեր 30-ի մեջ, վորը դրված և շիկացնող վառարանի վերեսում։

ՇԻԽՏԱ ԿԱԶՄԵԼԸ

Կոմպոնենտների քանակը շիխտայի մեջ հաշվում են հետևյալ ձևով։



896 մաս 100%-անի քրոմիտի կամ 608 մաս Cr_2O_3 -ի համար անհրաժեշտ և 848 մաս 100%-անի սոդա։ Յեթե հանելը պարունակում ե 40% Cr_2O_3 , իսկ սոդան 95% Na_2O_3 , հետևապես ծախսված նյութերի քանակը կարող ենք հաշվել՝

100 կշռամաս քրոմիտի մեջ կա 40 կշռամաս Cr_2O_3

$X \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad 608 \quad \rightarrow \quad \rightarrow$

$$X = \frac{100 \cdot 608}{40} = 1520 \text{ կշռամաս քրոմիտ։}$$

100 կշռամաս սոդայի մեջ կա 95 կշռամաս Na_2CO_3

$X \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad 848 \quad \rightarrow \quad \rightarrow$

$$X = \frac{100 \cdot 848}{95} = 892,6 \text{ կշռամաս սոդա։}$$

Այսոելից 1000 կիլոգրամ 40% Cr_2O_3 պարունակող քրոմիտի համար անհրաժեշտ են՝

1520 կգ 40%-անի քրոմիտի համար՝ 892,6, կգ 95%-անի սոդա
1000 $\rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad \rightarrow \quad X \quad \rightarrow$

$$X = \frac{892,6 \cdot 1000}{1520} = 587,2 \text{ կիլոգրամ սոդա։}$$

Նյութական բալանսը հաշվում են հետևյալ ձևով.

Որինակ՝ մեկ տոնն 68% CrO_3 նատրումական քրոմպիկ ստանալու համար, յերբ վառարանում ոքսիդացումը՝ 80% և և գործածվող քրոմիաը պարունակում ե 40% Cr_2O_3 , այդ դեպքում անհրաժեշտ ե՝

Ք Ր Ո Ս Ի Տ

$$0,68 \cdot 1,31 = X \cdot 0,40 \frac{\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7}{\text{Cr}_2\text{O}_3} \cdot 0,8$$

0,68—քրոմպիկի մեջ CrO_3 -ի տոկոսը:

131—փոխանցման գործակիցը, այսինքն 1 կգ CrO_3 -ը համապատասխանում ե 1,31 կգ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ին:

X—քրոմիտի այն քանակը, վորն անհրաժեշտ ե մեկ տոնն քրոմպիկ ստանալու համար:

0,4—քրոմիտի մեջ Cr_2O_3 -ի տոկոսը:

$\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ —սոլեկուլային կշիռը հավասար ե 262:

Cr_2O_3 —սոլեկուլային կշիռը հավասար ե 152:

0,8—ոքսիդացման տոկոսը —


$$0,68 \cdot 1,31 = X \cdot 0,40 \frac{262}{152} \cdot 0,8$$

$$X = \frac{0,68 \cdot 1,31 \cdot 152}{0,40 \cdot 262 \cdot 0,8} = 1,615 \text{ կիլոգրամ}$$

Մեկ տոնն 68% CrO_3 պարունակող քրոմպիկ ստանալու համար անհրաժեշտ ե 1615 կիլոգրամ 40% Cr_2O_3 պարունակող քրոմիտ:

Ս Ո Գ Ա

Սողայի քանակը հաշվում են ըստ հետևյալ ռեակցիայի՝



Բնդունենք, վոր գործածվող սողան պարունակում ե 96% Na_2CO_3 . Այդ դեպքում մեկ տոնն քրոմպիկ ստանալու համար անհրաժեշտ ե

$$X = \frac{1615 \cdot 0,4 \cdot 8 \cdot 106}{4 \cdot 152 \cdot 0,96} = 939 \text{ կիլոգրամ սողան:}$$

Սողայի քանակը շիխտայի մեջ մինչև այժմ վերջնականացնեն չե վորոշված: Յերկու իրար հակառակ հայացք կա.—հայացքներից մեկի կողմակիցները սողայի քանակը վերցնում են թեորետիկ քանակին հավասար, այն ե 1 կշումաս Cr_2O_3 -ին՝ 1,39 կշումաս սողա, և յերբեմն

ել վերցնում են թեորետիկ քանակից 3—5% ավելի: Մյուս հայացքի կողմակիցները սողայի քանակը շիխտի մեջ վերցնում են թեորետիկ քանակից 5—10%-ով պակաս: Առաջին հայացքի կողմակիցները բացատրում են հետևյալ կերպ: Վոր սողան քիչ լինելու դեպքում Cr_2O_3 -ի մի մասը մնում է առանց փոփոխման, հետևապես տեղի յե ունենում քրոմի կորուս: Յերկրորդ հայացքի կողմակիցները հետևյալ կերպ են հիմնավորում իրենց ասածը: յերբ արտադրության մեջ գործածվող քրոմիան աղքատ ե, այսինքն՝ պարունակում ե բավականին մեծ տոկոս ալումինիում ոքսիդ և սիլիցիումդիոքսիդ, շիկացման ժամանակ զոյտանում է ջրում լուծվողնատրիումալումինատ և նատրիում սիլիկատ, վորոնք կեղուսում են լուծույթը, վորը բավականին արգելք է հանդիսանում հաջորդ պրոցեսների ժամանակ: Մեր պայմաններում, յերբ ոգագործում ենք աղքատ քրոմիտ, ձեռնտու յե յերկրորդ վարիանտը, այն ե սողայի քանակը պետք ե վերցնել թեորետիկ քանակից պակաս: Այս դեպքում քրոմի կորուսը քիչ աղքատ յե լինում, բայց լուծվող ալումինատի քանակն ավելի պակաս ե լինում, այսինքն՝ ստացված լուծույթն տվելի ժաքուր ե լինում: Յեթե հաշվելու լինենք այն, վոր շիխտայում սողայի քանակը թեորետիկ քանակից աղքատ քիչ պետք ե լինի, այդ դեպքում կհատանանք.

$$X = \frac{a \cdot 848 \cdot 100 \cdot c}{100 \cdot 60s \cdot b \cdot 100} = \frac{a \cdot 1 \cdot 395 \cdot c}{b \cdot 100} = \frac{a \cdot 0,01395 \cdot c}{b}$$

a— Cr_2O_3 -ի տոկոսը հանքում:

b— Na_2CO_3 -ի տոկոսը սողայի մեջ:

c—ըստ թեորիայի պահանջվող սողայի տոկոսը:

Գ Ո Լ Ո Ս Ի Տ Կ Ա Մ Կ Ի Ր

Դոլոմիտի կամ կրի քանակը վորոշում են գործնականում, վորի մասին խօսք ե յեղել «Քրոմիտի այրման տեսությունը» գլխում: Սավարաբար 1 տոնն պատրաստի քրոմպիկի համար վերցնում են 1,6—1,7 տոնն կրի: Բայց յեղանակով աշխատելու ժամանակ վերցնում են 2,4—2,55 տոնն գործիք:


ՈՔՍԻԴԱՑՆՈՂ ՎԱՌԱՐԱՆՆԵՐ

Cr_2O_3 -ը CrO_3 -ի վերածելու, այսինքն նատրիում-մոնոքրոմատ ստանալու համար կամպունենաների խառնուրդը հատուկ վառարանների մեջ լինթարկում են ոքսիդացնող շիկացման:

Քրոմիտի ոքսիդացման համար գոյություն ունեն ինչպես ձեռքի, նույնպես և մեքենայացման յենթարկված վառարաններ: Այս վերջին

տեսակները նպատակահարմար են այն տեսակետից, վոր այստեղ Cr_2O_3 -ի ռքսիդացումը CrO_3 -ի ավելի մեծ է, աշխատանքը վառարանի մոտ ավելի հեշտ է և ինքնարժեքն ափելի փոքր:

Չեռքի վառարանը (տես նկ. 11) ներկայացնում է բոցային վառարան, վորտիկ այրման արդյունքն ուղղակի շփվում և շիխտայի հետ: Շիխտան լցնում են վառարանը՝ վերևում գտնվող և ձագարի ոգնությամբ: Վառարանի հատակն ամբողջովին հարթ է և մտավոր կերպով հատակը կարելի յերաժանել 4—6 հարթության (I, II, III, IV և V, ինչպես ցույց է տրված նկարում): Շիխտան հատուկ բահերի ոգնությամբ, վոր վառարանի մեջ հն մտցնում և պատուհաններից, համաչափ փոռմ են I հարթության վրա՝ փովածքի մակերեսին առաջ ալիքածներուն: յերկու ժամից հետո յերկաթյա թիակների ոգնությամբ շիխտան տեղափոխում են յերկրորդ հարթության վրա, իսկ



Նկ. 11. Չեռքի վառարանի սքեման:

առաջին հարթության վրա լցնում են նոր շիխտա: յերկու ժամ ել շիխտան մատով II հարթության վրա՝ տեղափոխում են յերրորդ հարթություն, իսկ առաջին հարթությունից շիխտան տեղափոխում են արդեն շիխտայից աղատված II հարթություն: շիխտայից աղատված առաջին հարթության վրա ավելացնում են և ձագարից նոր շիխտա, և այսպիսով վառարանում գտնվող մասսան յերկու ժամը մի անգամ մի հարթությունից տեղափոխում են մյուսը: Շիխտան վառարանի մեջ մնում ե 8—12 ժամ: Այդ ժամանակամիջոցում անհրաժեշտ է 10—15 րոպեն մի անգամ հատուկ գործիքների միջոցով խառնել վառարանում յեղած մասսան: մասսայի այն մասը, վորը չեր շփվում ողի հետ, ողի հետ շփվելու հարավորություն ե ստանում: Այդպես անհրաժեշտ է հաճախակի խառնել III, IV և V հարթություններում գտնվող մասսան, վորովհետեւ ռքսիդացման պրոցեսն զգալի չափով այս հարթությունների վրա յերաժանեն ունենում II և III հարթություններում յեղած մասսան կարելի յերաժանել 20—30 րոպեն մի անգամ: Մասսան առաջ շարժվելու, ինչպես նույն մասսան խառնելու ժամանակ, պետք է բաց անել 1—2 պատու-

հան, հակառակ դեպքում շատ շուտ կիջնի վառարանի ջերմաստիճանը իսկ վերջինս վերականգնելու համար հարկավոր է բավականին մեծ աշխատանք և յերկար ժամանակամիջոց:


Արդեն պատրաստի շիկացած մասսան V հարթության մոտ գտնվող պատուհանից դուրս են հանում ու լցնում յերկաթյա, ձեռքի փոքրիկ հոպնակների (ձեռնասայլակ) մեջ և տեղափոխում բիքրոմատի բաժինը:

Վառարանի ձախ մասում (ինչպես ցույց է տված նկարում)՝ գտնվում է Ա հնոցը, վորտեղ չուգունե ճաղերի վրա քարածուխ և այրվում: Վառարանը կարելի յերաժանել նաև հեղուկու գաղային վառե-



Նկ. 12. Յերեանի քրոմպիկ գործարանի վառարանի արտաքին տեսքը:
Բանվորները խառնում են վառարանում գանվող մասսան:

լանյութով: Վառելանյութի այրման արդյունքը շարժվում և ձախից գեպի աջ իսկ շիխտան շարժվում և աջից ձախ: Այդպիսի վառարանների և հարթության վրա ջերմաստիճանը հասնում է 700° — 800° , իսկ V հարթության վրա ջերմաստիճանը հասնում է 1100° — 1160° -ի: Այդպիսի վառարանի մեջ յուրաքանչյուր անգամ լցնում են 750 — 800 կիլոգրամ շիխտա: Վառարանների ներքին հրթնդրեմ ծեփվածքը (ֆյուտերօւկա) պատրաստում են հրակայուն շամող աղյուսից, իսկ արտաքին ծեփվածքը՝ հասարակ կարմիր աղյուսից: Վառարանի յերկրությունը 10—12 մետր է, լայնությունը՝ 2—2,5 մետր, հատակի



մակերեսը՝ 20—30 քառակուսի մետր. Կամարի բարձրությունը վառարանի հատակից 0,8—1,2 մետր է: Այս վառարանների որական արտադրանքը հասնում է 1,2—1,5 տոնն պատրաստի քրոմպիկի:


Ցերեմն զործ են ածում ձեռքի վառարան, վորն ունի ոեզեներատոր Այսպիսի վառարան ներկայացնում է նկ. 13-ը: Վառարանը յերկու կողմում ունի A և B կամերներ, վորոնց ներսում վորոշ զասավորությամբ շարում են աղյուսներ: Այս կամերներն անվանում են ոեզեներատորներ: Վառարանի յերկու ծայրումն ել գտնվում են C և D հնոցներ: Ցենթրալինքը, թե աշխատում է C հնոցը. C հնոցից դուրս յեկած այրման արդյունքը, շինուազի հետ, մտնում է A ոեզեներատորի մեջ, վորտեղ տաքացնում է աղյուսները: Այրման արդյունքը A ոեզեներատորից դուրս գալով, F և G կանարով անցնելով, ծխնելույզից դուրս է գալիս: Վորոշ ժամանակից հետո (սովորաբար 40—50 քառե) գաղարեցնում են այրումը C հնոցում և սկսում են այրման պլոցես D հնոցում: Նույն ժամանակամիջոցում i կափույրը շուռ են տալիս 180°, և ստացվում ե այնպիսի մի դրություն, վորի ժամանակ F խուզակը փակվում է, իսկ L խուզակը բացվում. այդ ժամանակ K և F խուզակավ A ոեզեներատորի մեջ մտնում է ողը, վորը բավական տաքանալով մտնում է d հնոցը այրման արդյունքը մտնելով B ոեզեներատորը, տաքացնելով աղյուսները, դուրս են գալիս l և g խուզակով, մտնում ե ծխնելույզ. այսպես անվերջ, 40—50 րոպեն մի անգամ, փոխում են այրումը հնոցներում, վորի հետևանքով փոխվում ե այրման արդյունքի շարժման ուղղությունը: Այդպիսի վառարանները C և d հնոցի փոխարեն կարող են ունենալ մի ընդհանուր հնոց՝ գեներատոր, վորտեղից ստացված գազը, ինչպես նաև ողը, նախորոք տաքանալով ոեզեներատորների մեջ, մտնում են վառարան, և այստեղ կատարվում է գազերի այրումը: 40—50 րոպեն մի անգամ փոխվում են գազի և ողի շարժման ուղղությունը, հետևապես փոխվում են այրման արդյունքի ուղղությունը այնպես, ինչպես նկարագրված է վերևում:

Ցենելով այն բանից, վոր վերը նկարագրված վառարաններում աշխատանքը շատ գեվար է, ինչպես նաև հակառակողապահական, այժմ քրոմիտն այրում են մեքենայացված յեղանակով պատվող վառարաններում:


ՊՏՏՎՈՂ ԱՓՍԵՅԱԶԵՎ ՎԱՌԱՐԱՆ

Նկ. 14-ը և 15-ը ներկայացնում են պատվող ափսեյաձև վառարան: Այս վառարանը տաքացվում է զեներատորային գազով. վառարանն ունի ոեզեներատորներ, վորոնք աշխատում են այնպես, ինչպես նկարագրված է ձեռքի վառարանում: Վառարանն ունի 4 ոեզեներատոր. — I ոեզեներատորները ծառայում են գազը տաքացնելու համար, իսկ

II.—II աեզներատորները տաքացնում են ողը: Գազի և ողի շարժման ուղղությունը փոխում են մոտավորագես ժամը մի անգամ. Վառարանը ներկայացնում է չուկունե ափսե B, գորը ներսից ծածկված ե հրակայուն շամոթի աղյուսով: Այս ափսեն A—C թավալուկների (րօլուկ) ոգնու-



Նկ. 14.




Նկ. 15.

թյամբ պտտվում ե D շրջագծային ռելսի վրայով: Ափսեն մի բռնեյում կատարում ե մոտ մեկ պտույտ. արամագիծը 6 մետր ե: Ներքեւում ափսեն ունի շրջագծային ատամնավոր կավար (ռեյկա), վորը շղթայով միացված ե կոնաձև ատամնավոր անվի հետ. վերջինս շարժումն ստո-

նում ե S հաղորդիչից: Վորպեսզի փոշին դռւրս չդա և չլցվի վառարանի շրջապատի ողը, վառարանն ունի M—M ավազյա փակալակ (զատօր): Շիխտան լցնում են վերեկի կամարում յեղած անցքով, վորը ցույց չի տված նկարում: Ե անցքը ծառայում ե մասսան իւառնելու համար: Շիկացած մասսան դուրս են հանում կենտրոնական N անցքով: Այդպիսի վառարանում որական 3 տոնն քրոմիտ են այրում:

ՑԱՆԻ ՍԻՍՏԵՄԻ ՊՏՏՎՈՂ ԳԼԱՆԱԶԵՎ ՎԱՐԱՐԱՆ

1930 թվին Ուրալի հին գործարանում դրին յերկու հատ օտնի սխտեմի պտտվող գլանաձև վառարան (տես նկ. 16): Վառարանը յերկարությունը 20 մետր ե, ներքին արամագիծը՝ 1,7 մետր. տաքացումը կատարվում ե գեներատորային գազով: Վառարանը ներկայաց-



Նկ. 16. Ցանի վառարան:

նում ե մի գլան, վորը ներսի կողմից ծածկված ե հրակայուն շամոթի պղյուսով: Վառարանի վրա ամրացված ե ատամնավոր անիվ, վորի շնորհիվ վառարանը պտտվում ե: Այս ատամնավոր անիվը հաղորդակացության մեջ ե մտնում մի ուրիշ ատամնավոր անվի հետ, վորը պտույտներ ստամալով մոտորից, հաղորդում ե վառարանի վրա գտնվող ատամնավոր անվին, և վերջինս պտտեցնում ե վառարանը: Վառա-

բանը յերկու կալանդների (բանդաժ) ոգնությամբ հենված և թափա-
լուկների վրա: Վառարանի յերկու ծայրում գտնվում ե աղյուսե կա-
մերներ, վորոնցից մեկը ներկայացնում ե այրման կամեր, իսկ մյուսը
ծառայում ե շիխտան վառարանի մեջ բեռնավորելու համար: Պատրաստ
մասսան, վառարանի այրման կամերի ներքեւ մասից դուրս գալով,
լցվում ե վագոնետի մեջ: Վառարանի որական արտադրանքը հաս-
նում է 4,5 տոնն քրոմպիկի:


ՀՈՒՄԲՈԼՏԻ ՍԻՍՏԵՄԻ ՊՏՏՎՈՂ ԳԼԱՆԱԶԵՎ ՎԱՌԱՐԱՆ


Ուրալի քրոմպիկի նոր զործարանում դրված և յերկու հատ չում.
բոլոր սիստեմի պատվող գլանաձև վառարան:

Շիխտան բունկերից ափսեյաձև մատուցողի ոգնությամբ լցվում ե
ժապավենավոր տրանսպարատյորի (փոխադրիչ) վրա, վորը տեղափո-
խելով այդ լցնում ե ելեվատորի մեջ. այս վերջինս ել շիխտան բարձ-
րացնելով՝ լցնում ե վառարանի հետեւի ծայրում գտնվող ծախսվող
շիխտայի բունկեր 1-ի մեջ (տես նկ. 17): Այստեղից շիխտան լցվում
ե շնիկ 2-ի մեջ, վորը շիխտան տեղափոխելով՝ լցնում ե ավտոմատ
կշեռք 3-ի մեջ. յուրաքանչյուր անգամ ավտոմատ կշեռքը կշռում է 25
կիլոգրամ. մի ժամում կշեռքը կշռում է 160 անգամ: Կշռված շիխտան
լցվում ե կրկնակի խառնող շնիկ 4-ի մեջ, իսկ այս ել փակ ճոռի (աշե-
աօբ) մէջոցով շիխտան լցնում ե պատվող վառարան 6-ի մեջ:

Վառարանի յերկարությունը 40 մետր ե, արտաքին տրամագիծը
2 մետր ե, իսկ ներքեն տրամագիծը՝ 1,6 մետր: Ներսից վառարանը
ծածկված ե հրակայուն շամոթի աղյուսով: Վառարանի կղիոն առանց
շիխտայի 112,15 տոնն ե: Նրա մեջ յեղած շիխտայի կշիռը հասնում է
138 տոննի: Վառարանն ունի 6° թեքություն, մի ժամում անում ե
22 պտույտ կամ մի րոպեյում 0,365 պտույտ (վառարանը մի ժամում
կարող ե կատարել 15—60 պտույտ): Մասսան վառարանի մեջ մնում
ե 5—7 ժամ: Վառարանն որական կարող ե այրել 50—65 տոնն
շիխտա կամ 12 տոնն պատրաստի ապրանք:


Պատրաստի մասսան վառարանի մյուս ծայրից լցվում ե P կամերի
մեջ, վորի ներքեւ մասում գտնվում ե չուկուն ցանց. ցանցի դերն
այն ե, վոր թույլ չի տալիս մեծ կտորներն անցնեն ու լցվեն թաց
աղացի մեջ: Մասսան ցանցից անցնելով լցվում ե թաց աղաց 7-ի
մեջ, նույն խողովակում, վորտեղից անցնում է 800° — 900° ջերմաս-
տիճան ունեցող շիկացած մասսան. սիդերվուար 18-ից լցվում ե նոսր
նատրիում մինոքրովատի լուծույթ, վորի մեկ լիտրում գտնվում է 20—50
գրամ Na_2CrO_4 : Մասսան թաց աղացում, վորի մեջ լցված են պող-
պատե գնդեր, հանգչում են մանրանում ու վեր ածվում թանձր հոսող





մասսայի, վորին սովորաբար շլամ անունն էն տալիս: Շլամը թաց
աղացից դուրս գալով լցվում ե սառուրացիոն գլան 8-ի մեջ:

Վառարանը տաքացվում ե փոշիացրած ածխով, վորը զենաիլյատոր
20-ի ոգնությամբ W խողովակով ածխի բունկեր 19-ից ներս ե մտնում
վառարանը. այրման համար ողը վառարանն ե մտնում ածխի հետ
միասին և, ըացի այդ, ողը ներս ե մտնում նաև վառարանի առջեկի



Նկ. 18. Հումբոլտի սիստեմի պլոտվող վառարանի արտաքին տեսքը:

մասում յեղած դոնից: Վառարանի առջեկի մասում ջերմաստիճանը
հասնում է 1100—1160⁰-ի, իսկ վերջին մասում ջերմաստիճանը հաս-
նում է 550—650⁰-ի: Այրման արդյունքը դուրս ե զալիս վառարանի
այն ծայրից, վորտեղից լցնում են շիխտան. դուրս յեկող գազերի
բարձր ջերմաստիճանն ոգտագործելու համար գազը նախ քան
ծինելույզի մեջ անցնելու մտնում ե Հումբոլտի սիստեմի շոգեկաթսա
22-ի մեջ, վորտեղից ստացված գոլորշին, վորը 5—6 ատմոսֆեր և,
բիքրոմատի ցեխում ոգտագործում են լուծույթները գոլորշիացնելու

համար: Գազի մեջ պարունակվող փոշու մի մասը հավաքվում է կաթսայի տակ դժոնվող փոշու բունկերի մեջ, վորածոցից փոշին, լցվելով տրանսպարայոր 26-ի մեջ, ելեվտառորի ոգնությամբ բարձրանում ու լցվում ե փոշու բունկերը: Կաթսայից դուրս յեկող գազերը, վորի ջերմաստիճանը հասնում է 250—300°, մտնում են ելեկտրոֆիլար (կուրգի սխտեմի) 23-ի մեջ, վորածող գազերն ամբողջովին աղատվում են փոշուց: Փոշին նստում ե ներքեւում գտնվող բունկերների մեջ, այդանուցից ել տրանսպորտոյոր 26-ի, ազա ելեատորի ոգնությամբ բարձրանում ու լցվում ե մանրացման բաժնում գտնվող փոշու բունկերը: Արդեն փոշուց մաքրված գազն ելեկտրոֆիլարից դուրս տալով՝ եքսկառուսեր 24-ի ոգնությամբ ուղարկվում ե յերեք ուղղությամբ: Գազի վորոշ մասը դուրս ե գալիս Հ ծխնելույթից, մի մասը մտնում ե սատուրացիոն գլան 8-ը, իսկ յերրորդ մասը վենտիլյատոր 20-ը վերցնելով՝ ածխի փոշին ներս ե մղում վառարանը:

Չերքի վառարաններում հաջողվում ե ոքսիդացումը հասցնել մինչև 90%-ի, իսկ մեքենայացված վառարաններում մինչև 92%-ի, բայց պրակտիկայում այդքան տոկոսի չեն հասնում, սովորաբար տոկոսը պակաս ե լինում:

ՇԻԿԱՑԱԾ ՄԱՍՍԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԶՐՈՎ (ВЫШЕЛОГИВАНИЕ)

Ներկայումս քրոմպիկի արտադրություն մեջ գոյություն ունի շիկացած մասսայի մշակման յերկու յեղանակ.

1. Շիկացած մասսայի մշակումը ջրով, վորածող մասսան անշարժ ե, իսկ ջուրը հասում ե:

2. Յերբ ջուրը և շիկացրած մասսան հատուկ ապարատների մեջ ուժեղ խառնվելով առաջ են շարժվում:

1-ին յեղանակ.—Շիկացած մասսա, վորն իր մեջ պարունակում ե Na_2CrO_4 , Fe_2O_3 , SiO_2 , CaO , Al_2O_3 , Cr_2O_3 և վորոշ քանակությամբ ել CaCrO_4 և վերջապես այն բոլոր նյութերը, վորոնք ուղեկցում են քրոմիտին: Այս միացություններից ջրում շատ լավ լուծվում ե Na_2CrO_4 -ը և բավականին գեվարությամբ CaCrO_4 -ը. մնացած միացությունները գործնականորեն ջրում չեն լուծվում: Անհրաժեշտ ե ջրի ոգնությամբ մասսայից հանել մեզ անհրաժեշտ նյութը, այն ե Na_2CrO_4 -ը. այս նպատակով մասսան լցնում են Զանգ-ի ապարատի մեջ, այս ներկայացնում ե բավականին մեծ յերկաթյա արկղ. վորի հատակում գրված ե յերկաթացանց. ներքեն մասում կա հատուկ ծորակ՝ լուծույթը վուրս տանելու համար:

Մասսան սկզբում անհրաժեշտ ե մշակել նոսր նատրիում մոնոքրոմատի լուծույթով՝ ավելի խիտ լուծույթի վերածելու համար: սովորա-

բար այս նպատակով գործ են ածուկ 5—120 բուժ. ունեցող լուծույթ, գորի մեկ լիտրում գտնվում է 60—120 գրամ Na_2CrO_4 . խորհուրդ չէ արվում առաջ մասսան առաջին մոմենտին մշակել նատրիում մոնոքրոմատի խիտ լուծույթով, հակառակ դեպքում կարող ե առաջ գալ հետեւյալը. վորովինետև մասսան պարունակում ե բավական քանակությամբ CaO (25—35%), վորն ագահորեն ջուր կլանելով վեր և ածվում Ca(OH)_2 -ի և միաժամանակ, մասսայի տաք լինելու հետևանքով, ավելացրած լուծույթի մեծ մասը կողորշիանա: հետևանքը կլինի այն, վոր վոչ թե մասսայից լուծույթի մեջ կանցնի Na_2CrO_4 -ը, այլ ընդհակառակը, լուծույթում յեղած Na_2CrO_4 -ը, աղատվելով ջրեց, կնատի մասսայի վրա: Յեղնելով սրանից՝ անհրաժեշտ ե մասսայի մշակումն առաջին մոմենտում տանել կամ նատրիում մոնոքրոմատի նոսր լուծույթով և կամ մաքուր ջրով, վորեց հետո մասսան պետք ե մշակել տաք ջրով: Մասսայի մշակումը պետք ե կատարվի մինչև այն ժամանակի, յերբ դուրս յեկող լուծույթի խտությունը կհասնի 0° Բե՛ ի, այս նշանակում ե այն, վոր ատվալի մեջ պրակտիկորին Na_2CrO_4 չի մնացել. այսպես թե այնպես ատվալի մեջ վորոշ չափով (1—2%) Na_2CrO_4 և մնում: Մասսան այս ձևով մշակելիս ստացվում ե նատրիում մոնոքրոմատի սկզբնական լուծույթ, վորի խտությունը 40—45 Բե՛ ի, այսինքն մեկ լիտրում գտնվում ե 400—500 գրամ նատրիում մանոքրոմատ:

Մասսան ջրով մշակելիս հիմնական պրոցեսն այն ե, վոր Na_2CrO_4 , լուծվի ջրի մեջ, ինչպես տեսանք, այդ նպատակով գործ են ածում տաք ջուր, վորովինետև Na_2CrO_4 -ն ավելի լավ ե լուծվում տաք ջրում, քան թե սառը ջրում: այս ցույց են տալիս ստորև բերված թվերը:

100 գրամ ջրի մեջ տարբեր ջերմաստիճանում լուծվում ե հետեւյալ քանակի Na_2CrO_4 .


0°-ում	31,69 գրամ	25,6°-ում	85,7 գրամ	49,5°-ում	103,5 գրամ
10°	50,0	30°	87,38	59,5°	114,5
18,5°	71,5	36°	91,4	70°	122,5
21°	80,0	40°	95,4	80°	124,3
23,2°	82,7	45°	100,8	100°	126,0

Նատրիում մոնոքրոմատը բյուրեղանում ե 10 մոլեկուլ ջրով. բյուրեղային նատրիում մոնոքրոմատի ֆորմալը կլինի $\text{Na}_2\text{CrO}_4 \cdot 10 \text{ H}_2\text{O}$ ունի դեղին գույն, տեսակարար կշիռը 2,16 ե, հալվում ե 813°-ում: Տաքացնելիս բյուրեղային նատրիում մոնոքրոմատը փախանցվում ե անջուր նատրիում մոնոքրոմատի վորի անդամանը վորոշված չե: Անջուր Na_2CrO_4 -ի տեսակարար կշիռը 2,72 ե:

Կալցիում մոնոքրոմատը, ինչպես գիտենք, դժվար և լուծվում ջրի մեջ, սակայն CaCrO_4 -ն ավելի լավ լուծվում է սառը միջավայրում, քան թե տաք. ինչպես, որինակ՝ 100 գրամ ջրի մեջ 0° -ում լուծվում է 4,5 գրամ, իսկ 100° -ում՝ 0,4 գրամ։ Կալցիում մոնոքրոմատը զեղին գույնի նյութ է, բյուրեղանում է յերկու սոլեկուլ ջրով, բյուրեղային կարցիում մոնոքրոմատի ֆորմուլը $\text{CaCrO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$:

Լուծելիության պրոցեսի վրա խոշոր ազդեցություն են ունենում կողմանակի ուսակցիաները, վորոնք տեղի յեն ունենում, յերբ մասսան մշակում են ջրով. այս պրոցեսի ժամանակ տեղի յեն ունենում հետեւյալ ուսակցիաները.


1. Կիրը շիկացած մասսայի մեջ հանդցնելը, այն և CaO -ի փոխանցվելը $\text{Ca}(\text{OH})_2$ -ի։



2. Ջրում քիչ լուծվող CaCrO_4 -ը, ինչպես նաև յերկաթի և մյուս մետաղների քրոմաթթվի աղերի փոխանցումը ջրում լավ լուծվող նատրիումի մոնոքրոմատի այս փոխանցումը կատարվում է շնորհիվ մասսայում յեղած սողայի ավելցուկի, կամ, յեթե վերջինս բացակառում է, ջրով մշակելու ժամանակ չանքսի ապարատներում ավելացնում են վորոշ քանակի սողա.



3. Վատարանում գոյացած նատրիում ալումինատի NaAlO_2 առաջարկումը



Կիրը հանդցնելը բացասական ազդեցություն ե թողնում մոխրավայի (ենթականաց) վրա, վորովինետն կիրը հանդցնելու ժամանակ բավականին ջուր և ծախսվում, մեծ քանակությամբ դոլորշի յե արտադրվում, և այդ պատճառով մեծ քանակությամբ ջուր և գոլորշինում։

Ջրում քիչ լուծվող կալցիում քրոմատի փոխանցումը ջրում լավ լուծվող նատրիում մոնոքրոմատի—գրական նշանակություն ունի, վորովինետն այս դեպքում քրոմի կորուստն ավելի քիչ ե լինում։ Փորձերը ցույց են տալիս, վոր սողայի ավելցուկի դեպքում ջրում քիչ լուծվող CaCrO_4 -ի քանակը համեմատաբար քիչ ե լինում. Ուրալի քրոմպիկ գործարանի պրակտիկայից վերցրած թվերը հետևյալն են ցույց տալիս. յերբ շիխտայի մեջ յեղած սողայի քանակը 86% ե թերեւտիկ քանակի հանդեպ, և ոգտագործվել ե 100%-ով (այսինքն մասսայի մեջ սողայի ավելցուկը չկա), շիկացած մասսայի մեջ ջրում դժվար լուծվող կալցիում մոնոքրոմատի քանակը 0,4% է, իսկ ատվալի մեջ չլուծվող կալցիում մոնոքրոմատի քանակը՝ 2,23, իսկ ջրում լուծվող նատ-


րիում մոնոքրոմատի քանակը՝ 1,24% է, յեթե սողայի քանակը շիխտայում 95% ե թերեւտիկ քանակի հանդեպ և ոգտագործվում է 92%-ով (այսինքն մասսայում մնում է սողայի ավելցուկ), մասսայի մեջ ջրում չլուծվող կալցիում մոնոքրոմատի քանակը՝ 0,8% է, ատվալում՝ 1,48%, իսկ ջրում լուծվող նատրիում մոնոքրոմատի քանակը՝ 1,01%։

Այս ռեակցիան, վորը տեղի յե ունենում Na_2CO_3 -ի և CaCrO_4 -ի մեջ, պրակտիկութեան պետք ե ընթանա ձախից աջ, այսինքն հակադարձելի չպետք ե լինի, վորովինետն գոյանում է CaCO_3 , վորն ավելի դժվար ե լուծվում ջրի մեջ այն դեպքում, յերբ CaCrO_4 -ը համեմատաքար լավ ե լուծվում. Յերբ շիկացած մասսայի մեջ CaO է քանակը շատ ե լինում, աղատ Na_2O ը գտնվում է վոչ թե իբրև Na_2CO_3 , այլ թե NaOH , այդ դեպքում տեղի կունենա հատկյալ ռեակցիան.



Այս ռեակցիան արդեն հակադարձելի յե, վորովինետն գոյացած $\text{Ca}(\text{OH})_2$ ը վորոշ չափով լուծվում է ջրի մեջ (20° -ում՝ 100 գրամ ջրում լուծվում է 0,136 գրամ $\text{Ca}(\text{OH})_2$, իսկ 100° -ում՝ 0,06 գրամ):

Ինչպես պրակտիկան ե ցույց տալիս, քրոմի կորուստն իբրև CaCrO_4 —հասնում ե ամբողջ քրոմի 5—10%-ին։ Կորուստի այս քանակը պակասեցնելու համար կան հատուկներ, վորոնց մասին ելքունք հետու վառարանից դուրս յեկող գաղերը, վորը պարունակում է $\text{CO}_2 \cdot \text{CaO}$, վեր են ածվում CaCO_3 -ի, հետեւապես մասսայից համարյալ լուծվող հանվում են Na_2CrO_4 -ը և CaCrO_4 -ը. այս ռեակցիայի հետ միաժամանակ տեղի յե ունենում նաև նատրիում ալումինատի առաջարկումը.




Իսկ յերբ լուծույթի մեջ մնում է նատրիում ալումինատ, լուծույթը պղտոր ե լինում, դժվար ե մաքրվում, քրոմպիկը շատ դժվարությամբ ե յենթարկվում բյուրեղացման և ստացված քրոմպիկը լինում է վատ գույնի:

II. Յեղանետակ. Թաց աղացից (տես նկ. 17) գուրս յեկող մասսան լրցնում են սատուրացիոն գլան 8-ը, իսկ նրա հակառակ ուղղությամբ N խողովակով սատուրացիոն գլանի մեջ ե մտնում վառարանից դուրս յեկող գաղի վորոշ մասը. Սատուրացիոն գլանի յերկարությունը 20 մետր է, տրամագիծը՝ 1,6 մետր, գլանի կշիռը 52 տոնն է, գլանում գտնվող նյութի կշիռը 23 տոնն է, ծախսվում է 14,5 ձիուուժ, պտույտների թիվը մեկ ժամում հավասար ե 125—300. ի:


Սատուրացիոնը ծառայում է շատ գրամը CO_2 գաղով հագեցնելու համար, և այդ ժամանակ տարբալուծման ե յենթարկվում շիկացած ժամանակա-

Նակ գոյացած կալցիում մոնոքրոմատը և մասամբ ել նատրիում ալու-
մինատը.



Սաացվում ե ՝ CaCO_3 և Al(OH)_3 , վորը ֆիլտրացիայի ժամանակ
մում ե ատվալի մեջ:

Սատուրատոր ներս մտնող գազերը հազեցնելով շլամը՝ ո խողովա-
կով գուրս են դալիս: Սատուրատորից գուրս յեկող շամը թեք ճռողի
լցվում ե խառնող ապարատ 9-ի մեջ, խառնող ապարատի նշա-
նակությունն այն ե, վոր այստեղ մասսան լավ խառնվում ե. խառ-
նող ապարատի խառնիչը մեկ ըովեյում 30 պտույտ ե անում: Ելա-



Նկ. 19.

մանման մասսան պոմպ 10-ով բարձրացնում ե վեր և լցնում Վոլֆի սիր-
աեմի վակուում ֆիլտրի մեջ (տես նկ. 19): Վակուում ֆիլտրը ներկայաց-
նում ե մի թմբուկ, վորն արտաքինից ծածկված ե ֆիլտրող կտորով. այս
թմբուկի մեջ պատրաստում են վակուում, վորի շնորհիվ նատրիում մո-
նոքրոմատի լուծույթը ներս ե ծծվում, իսկ ատվալը մնում ե ֆիլտրի
մակերեսի վրա, վորը հատուկ դանակով պոկում են՝ ֆիլտրող մակերեսն
ազատելով շլամ-ատվալից:

Վակուում ֆիլտրից ստացված խիտ զեղին լուծույթը, վորի խտու-
թյունը $20-25^{\circ}$ Be' ե, այսինքն՝ մեկ լիտրում գտնվում ե $150-180$
գրամ նատրիում մոնոքրոմատ, լցվում ե վակուում ընդունիչ 14-ը, այս-
տեղից ել ինքնահսով լցվում ե բակ 16-ը, վորտեղ ալումինատից
աղատվելու համար կատարում են նախնական խածառում, վորից հետո
լուծույթը տեղափոխում են բիբրոմատի բաժինը:


Ֆիլտրի մակերեսին յեղած շլամ-ատվալը լվանում են տաք ջրով.
ատացված նոր զեղին լուծույթը, վորի մեկ լիտրում գտնվում է $20-50$
գրամ Na_2CrO_4 հավաքվում ե վակում ընդունիչ 13-ի մեջ. աղա այդ-
աղից հավաքվում ե
նոր զեղին լուծույ-
թի համար պատրաստ-
ված բակ 15-ի մեջ,
վորտեղից պոմպի ոգ-
նությամբ բարձրաց-
նում և լցնում են ոհ-
զերվուար 18-ը: Ինչ-
պես մեզ հայտնի յե-
նեղիրվուար 18-ից
լուծույթը, լցնելով
վառարանից գուրս յե-
կող շիկացած մաս-
սայի վրա, մշակում
են այդ մասսան:

ԴԵՂԻՆ ԼՈՒՇՈՒՑԹԻ ԳՈԼՈՐՃԻԱՅՈՒՄԸ

Շիկացած մասսան
շրով մշակելու ժամա-
նակ ստացված լու-
ծույթը պահանջված
խառնից բավա-
կանին նոսր ե, այդ
պատճառով ել լու-
ծույթը յենթարկում
են գոլորշիացման: Գո-
լորշիացումը կատա-
րում են բաց կաթսա-
ներում, վորոնք տա-
քացվում են գոլոր-
շիով, վորն անցնում ե

կաթսայի մեջ գտնվող ոձածե խողովակներով. կաթսան ունի խառնիչ.
խառնիչի դերն այն ե, վոր լուծույթը համաչափ տաքանա:

Ուրալի քրոմպիկի նոր գործարանում գոլորշիացում կատարում են
այսպես կոչված վակուում ապարատներում: Այդ ապարատներում,



Նկ. 20.

մթնոլորտային փոքր ճնշման շնորհիվ, լուծույթը յեռում և ավելի ցածր ջերմաստիճանում:


Վակուում ապարատը (տես նկ. 20) ներկայացնում է մի ցիլինդր A, փոքր ներքեռում վերջանում և B կոնուսով. այս կոնուսն ունի պոմզ C—լուծույթը հանելու համար: Գլանի ներքեմ մասը և կոնուսը տաքացվում են գոլորշիվ, վորն անցնում է D—D խողովակներով. գուրչին մանում և E խողովակով: Վակուում ապարատն ունի մանումեար, փոքր ցույց ե տալիս ապարատում յեղած ճնշումը. կա հատուկ անցք՝ F, վորը ծածկված ե ապակով, սրանով կարելի յետուգել այն պրոցեսը, վորը տեղի յեռնենում ապարատում: Ունի հատուկ հարմարություն՝ լուծույթն ապարատը մտցնելու ու հալելու համար, ինչպես նաև գոլորշին մտցնելու և հանելու համար: Ապարատում վակուումն առաջանում է վերև գտնվող անցքից:

Գոլորշիացումը կատարում են այնքան, մինչև վոր լուծույթի խտությունը հասնում է $42 - 45^{\circ}$ ԲԵ՝ այսինքն՝ յերբ լուծույթի մեկ լիարում գտնվում է $400 - 500$ գրամ Na_2CrO_4 : Այդպիսի լուծույթը յեռում է 107° -ում և նրա տեսակարար կշիռը $1,314$ է:

ՆԱՏՐԻՈՒՄ ՄՈՆՈՔՐՈՍԱՏԻ ՓՈԽԱՆՁՈՒՄԸ ՆԱՏՐԻՈՒՄ ԲԻՔՐՈՄԱՏԻ (ԽԱԾԱՏՈՒՄ)

Նատրիում մոնոքրոսատի փոխանցումը նատրիում բիքրոսատի—քրոմպիկի արդյունաբերության մեջ անվանում են խածատում:

Սովորաբար այս պրոցեսը տանում են ծծմբական թթվի ոգնությամբ, լուծույթը լցնում են այնպիսի կաթսայի մեջ, վոր ներսից ծածկված և կապարով և ունի խառնիչ. ապա դեղին լուծույթի վրա ավելացնում են $52 - 66^{\circ}$ ԲԵ՝ խտություն ունեցող ծծմբական թթու: Տեղի յեռնեռում ստորև բերված եկզոթերմիկ ռեակցիան:



Այնպես վոր այս պրոցեսի ժամանակ կաթսայում ջերմաստիճանը 33° -ից բարձր է. նատրիում սուլֆատը լուծույթից դուրս գալով նստում է վորպես անջուր բյուրեղներ: Անհրաժեշտ ե այս պրոցեսի ժամանակ հետեւ, վոր խածատումը լրիվ կատարվի. այդ վորոշելու համար գործ են ածում կարմիր կոնողի թուղթ. խածատումը լրիվ ե համարվում այն ժամանակ, յերբ կոնզ թղթի վրա առաջ ե գալիս մուգ ողակ, վորն աստիճանաբար պետք ե անհետանա: Սովորաբար խածատումը տևում է $1\frac{1}{2} - 2$ ժամ:

Խածատումը վերջանալուց հետո խառնիչը կանգնեցնում են. սուլֆատը նստում է կաթսայի հատակին: Խածատումից հետո լուծույթի խտու-

թյունը պակասում է, ստացված լուծույթի խտությունը լինում է $37 - 40$ ԲԵ՝ Խածատումից հետո ամբողջ սուլֆատը չի նստում, այլ նրա մի մասն է նստում, իսկ մյուս մասը նստում է հետագա գոլորշիացման ժամանակ: Ինչքան լուծույթի մեջ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ի քանակը շատ լինի, այն քան ել Na_2SO_4 -ը քիչ կլինի. այս ապացուցվում է ստորև բերված թվերով. յերբ լուծույթի մեկ լիտրում գտնվում է 450 գրամ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$, այն պարունակում է 143 գրամ Na_2SO_4 , այսինքն $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ի եկվիվալենտ քանակի 60 տոկոսը, 550 գրամ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ պարունակող 1 լիտր լուծույթը պարունակում է 86 գրամ Na_2SO_4 , այսինքն $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ի եկվիվալենտ քանակի 30% -ը. 1100 գրամ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ պարունակող 1 լիտր լուծույթը պարունակում է 15 գրամ Na_2SO_4 կամ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ի եկվիվալենտ քանակի $2,5\%$ -ը:

Լուծույթը տեղափոխում են 2-րդ գոլորշիացնող կաթսան, իսկ սուլֆատը, վորը պարունակում է բավականին մեծ քանակությամբ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$, մի քանի անգամ տաք ջրով լվանում են, ստացած լուծույթը միացնում են զեղին նոսր լուծույթի հետ: Այսպես թե այնպես, չի հաջողվում սուլֆատն ամբողջովին սաքրել $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ից. գործարանային պրակտիկայում սուլֆատի մեջ միշտ մնում է $2 - 3\%$ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$:

Բիքրոմատ ստանալու այս յեղանակն ունի հետևյալ թերությունները.


1. Շիխտայում գտնվող Na_2CO_3 -ի կես մասը վեր ե ածվում նատրիում սուլֆատի, — մի նյութի, վորը յերկու անգամ ավելի աժան է, քան Na_2CO_3 -ը:

2. Ստացված սուլֆատը ծախու ապրանք կղառնա, յերբ մաքրեն նրա մեջ յեղած նատրիում բիքրոմատը:

3. Մեկ տոնն քրոմպիկ ստանալու համար ծախսվում է $0,4 - 0,5$ տոնն խիտ ծծմբական թթու:

Վերը հիշված բացասական կողմերը վերացնելու համար ներկայիս քիմիկուների միտքն զբաղված ե այն խնդրով, վոր խածատում ծծմբական թթվով կատարելու փոխարեն կատարեն կրի վառարաններից ստացվող CO_2 գաղով. այս գեղաքում նատրիում սուլֆատի փոխարեն կստացվի նատրիումբիկարբոնատ՝ NaHCO_3 , վորը նորից կմտնի շիխտայի կազմության մեջ, այսինքն՝ ծախսվող սողայի քանակը մոտ կիսում չափ կպակասի:

Խածատումն ածխաթթվով՝ կատարվում է ըստ ստորև բերած սեակցիայի:




Ինչպես տեսնում ենք, խածատումն ածխաթթվով՝ տեխնոլոգիական սեակցիայով համարվում է ավելի այժմեական, բայց գործնական տե-

սակետից բավականին բարդ եւ կապված եւ մեծ դժվարությունների հետ:

Վերը բերված ռեակցիայից յերևում ե, զոր նա հակադարձելի յե, և ռեակցիան ձախից աջ կը թանա միմիայն 5 ատմոսֆեր ճնշման տակ. ստացված բիկարբոնատը նատրիումբիքրոմատից կարելի յե անջատել միմիայն ճնշման տակ, այլ կերպ ռեակցիան հակադարձելի կլինի: Այս պրոցեսը ճնշման տակ կատարելը բավականին դժվար է, այդ պատճառով ել այս մեթոդը մինչեւ այժմ պրակտիկ ճնշանակություն չի ստացել: Սպացված նատրիումբիկարբոնատը, զորը կեղաստ է, $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ով անհրաժեշտ չել լվանալ, զորովհետեւ այն նորից ստնելու յե ռեակցիայի մեջ, այսինքն փոխարինելու յե սոդային:

Բացի վերևում հիշված այս յերկու յեղանակներից, մոնոքրոմատից բիքրոմատ կարելի յե ստանալ նաև ամիակի և CO_2 -ի միջոցով, այսինքն այն յեղանակով, ինչ յեղանակով, զոր այժմ ստանում են սոդա: Այս յեղանակով բիքրոմատ ստանալիս կարելի յե աշխատել սովորական մինորատային ճնշման տակ: Սկզբում ստացվում ե ամոնիումանորոմատ և նատրիումբիկարբոնատ.



Բիկարբոնատը մնում ե նստվածքում. այն ֆիլտրելով անջատում են ամոնիում մոնոքրոմատից, վերջինս յեռացնելով եկվիտալենտ քանակի նատրիում մոնոքրոմատի հետ՝ ստացվում ե նատրիում բիքրոմատ.



Բիքրոմատ ստանալու այս յերկու յեղանակը քրոմպիկի արտադրության պրակտիկայում չեն կիրառում. այդ փոխանցումը, ինչպես աեսանք, կատարում են ծծմբական թթվի ունությամբ, զորովհետեւ այս պրոցեսը շատ պարզ եւ բաղմայա փորձ ունի:


ԿԱՐՄԻՐ ԼՈՒՇՈՒՅԹԻ ԳՈԼՈՐԾԻԱՑՈՒՄԸ

Կարմիր լուծույթը, զորը պարունակում բավականին մեծ քանակությամբ նատրիում սուլֆատ, բաց կաթսաներում կամ խառնիչ ունեցող վակում ապարատներում յենթարկում են գոլորշիացման. գոլորշիացումը կատարում են այնքան, մինչեւ զոր կարմիր լուծույթի խտությունը հասնի $62 - 65^{\circ}\text{Be}'$, այսինքն մեկ լիտրում լինի $1100 - 1200$ գրամ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$ (այս քանակը $840 - 900$ գրամից փոքր չպիտի լինի). այդպիսի լուծույթը յեռում է $115 - 120^{\circ}$ -ում. տեսակարար կշիռը 1,5 է: Այս պրոցեսի ժամանակ նստում ե անջուր նատրիում սուլֆատը, այսպիսով կարմիր լուծույթը համարյա ամբողջովին ազատ-

վում ե սուլֆատից: Լուծույթի գույնն ավելի պարզ լինելու համար յուրաքանչյուր կաթսայի մեջ լցնում են 12 — 24 կիլոգրամ քլորակիր: Վորոշ ժամանակ լուծույթը թողնում են հանգիստ, զորպիսվի սուլֆատը նստի, զորից հետո լուծույթը տեղափոխում են բաց գոլորշիացնող-ձուլուղ կաթսան, իսկ սուլֆատը մի քանի անգամ տաք ջրով լվանալուց հետո գաղարկում են:

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՇՈՒՅԹԻ ՎԵՐՃՆԱԿԱՆ ԳՈԼՈՐԾԻԱՑՈՒՄԸ

Կարմիր լուծույթի վերջնական գոլորշիացումը կատարում են բաց կաթսայում. այս ներկայացնում է (տիս նկ. 21) մի գլան A, զորն ունի կոնաձև հատակ. քրոմպիկը դուրս հանելու համար ներքեաւմ ունի



Նկ. 21.

C ծորակ. կաթսան ունի խառնիչ B, գոլորշային շապիկ (պարօպար րսառակա) E անցքով, շապկի մեջ են մացնում 5 — 6 ատմոսֆեր ճնշում ունեցող գոլորշի, զորի շնորհիվ կատարվում է լուծույթի գոլորշիացումը. F անցքով գուրս ե գալիս արդեն ոգտագործված գոլորշին: Ցերը լուծույթը բավականին թանձրանում ե, այսինքն յերբ CrO_3 -ի քանակը հասնում է $68 - 69\%$ -ի, բաց են անում ներքեաւմ գտնվող C ծորակը

և թանձը մասսան լցնում են յերկաթյա թմբուկների մեջ. այստեղ մասսան կարծրանալով վեր և ածվում մոնոլիտի, վորից հետո փակում են թմբուկների քերանը և հանվում վաճառքի։ Նման կաթսաներում քրոնպիշի ձուլումը տևում է 15—18 ժամ։

Ուրալի նոր գործարանում ստանում են բյուրեղային քրոմպիկ, այդ նպատակով լուծույթը գոլորշացնում են այնքան, մինչև վոր նրա մի լիտրում գտնվի 1600—1700 գրամ $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$. այստեղից լուծույթը լցնում են ֆիլտր պրեսի մեջ. ֆիլտրված լուծույթը տեղափոխելով լցնում են կրիստալիզատորի մեջ. այս իր կառուցվածքով բոլորովին չի տարբերվում գոլորշացնող կաթսաներից. տարբերությունն այն է միմիայն, վեր գոլորշացնող կաթսաների ոճաձև խողովակների մեջ մտցնում են առաք գոլորշի, իսկ այս դեպքում ոճաձև խողովակների մեջ մտցնում են սառը ջուր. այստեղ լուծույթը խառնիչի ոգնությամբ լավ խառնվում ե. այս պրոցեսն այդպիսի ապարատներում կատարում են սու 36 ժամ անողությամբ. լուծույթի ջերմաստիճանն իջնելով հասնում ե 30—35°, փորից հետո լուծույթը տեղափոխելով ցենտրոֆուլգի մեջ քրոմպիկի բյուրեղներն անջատում են մայր լուծույթից. բյուրեղային քրոմպիկը հատուկ չորանոցներում չորացնում են, ապա լցնում փայտայիշ: կամ յերկաթյա թմբուկների մեջ և հանում վաճառքի:

Նատրիում բիֆրոմատը բյուրեղանում և յերկու մոլեկուլ ջրով: Ան-
ջուր նատրիում բիֆրոմատի տեսակաբար կշիռը 2,72 ե, հալման ջեր-
մաստիճանը՝ 320°: 100 գրամ ջրի մեջ տարբեր ջերմաստիճաններում
յուժվում ե հետևյալ քանակի $\text{Na}_2\text{Cr}_2\text{O}_7$.

Զերսաստիճանը. 10° -ում 20° 30 40 50 60 70 80 100
Լուծելիությունը. 170 գրամ 180 197 220 248 283 323 386 440

ՆԱՏՐՈՒՄԱԿԱՆ ՔՐՈՍԹԻԿԻ ՀԱՄԱՐԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՍԱՎԱԿՐԾ՝ OCT—64


Համաձայն OCT-ի՝ տեխնիկական նատրումական քրոմագիկը պետք է սպազմաբարի հետեւյալ աղաճանջները:

Մեկ տոնն 100%-անի $\text{N}_2\text{Cr}_2\text{O}_7 \cdot 2\text{H}_2\text{O}$ ստանալու համար անհրաժեշտ է հետևյալ քանակի նյութեր:

№ ըստ կարգի	Նյութերը	Պայմանական հաշվումներ	Գործարաններ	
			Հին սիստեմի	Նոր սիստեմի
1	Քրոմը	45 %	1,792	1,946
2	Սողա	100 %	1,046	1,142
3	Կյած կիր	100 %	0,327	—
4	Կրաքար	բնական	1,310	—
5	Դոլմեթ	բնական	—	3,307
6	Առվարդ	արտադրություն-	2,157	—
7	Քլորակիր	նկաց ստացված	0,003	—
8	Ծծմբական թթու	100 %	0,503	0,515

ԿԱՐԿՈՒՄԱԿԱՆ ՔՐՈՍԹԻԿ (K₂Cr₂O₇)

Կալիսմական քրոմպիկն ստանում են նույն ձևով, ինչ զոր նաև բիումական քրոմպիկն են ստանում, միայն այս տարրերությամբ, զոր այս դեպքում սողայի փոխարեն վերցնում են պոտաշ՝ K_2CO_3 . Աջսիդացնող վառարանում տեղի յեն ունենում հետևյալ ռեակցիան



Ծիկացած մասսայի մշակումն այստեղ նյուՆպես կատարվում ե այն ձևով, ինչ վոր նատրիումական քրոմպիկի դեպքում, կուծույթում ռաաց- գում ե կալիում մոնոքրոմատ, մնացած նյութերը մնում են ատվալում:


Կալիում մոնոքրոմատը բյուրեղանում և անջուր. տեսակարար կշիռն է 2,7, հալվում է 970° դւժ. Կալիում մոնոքրոմատն ավելի քիչ և լուծվում ջրի մեջ, քան նատրիում մոնոքրոմատը. Ջերմաստիճանը բարձրացնելիս լուծելիության աստիճանն այն չափով չի մեծանում, ինչ չափով Na_2CrO_4 -ի լուծելիության աստիճանն եր մեծանում. ցածր ջերմաստիճանում K_2CrO_4 -ն ավելի լավ և լուծվում ջրի մեջ, քան Na_2CrO_4 -ը, իսկ բարձր ջերմաստիճանում Na_2CrO_4 -ն ավելի լավ և լուծվում ջրի մեջ, քան K_2CrO_4 -ը:

100 զրած ջրի մեջ տարբեր ջերմաստիճաններում լուծվում ե հետեւյալ քանակների K_2CrO_4 .

Ջերմաստիճանը — 11,37 0° 30° 60° 105,8

լուծելիության չափը 54,57 57,11 65,13 74,6 88,8

Ստացված կալիում մոնոքրոմատի լուծույթը յինթարկում են գուրը շիացման, վորոշ խտությունից հետո ավելացնելով ծմբական թթու կալիում մոնոքրոմատը փոխանցում են կալիում բիքրոմատի.




Թոլորշիացնող կաթսայի մեջ լուծույթը յենթարկում են գոլորշիացման, և այնտեղ K_2SO_4 -ն անջատվում ե կալիում բիքրոմատի լուծույթից: Խիտ կալիում բիքրոմատի լուծույթը յենթարկում են բյուրեղացման և ստացվում ե բյուրեղային կալիումբիքրոմատ՝ $K_2Cr_2O_7$:

Կալիումական քրոմպիկի բյուրեղացումը կատարում են բյուրեղացնող արկղների մեջ. խիտ լուծույթը լցնում են այդ արկղների մեջ (արկղները ներսից ծածկվում են կապարյաթիթեղներով), լուծույթը մի քանի որ մալով՝ սառչում ե. կալիումբիքրոմատի մեծ մասը բյուրեղացնում ե և ստացվում են կալիումական քրոմպիկի բյուրեղներ: Հազեցած կալիում բիքրոմատի լուծույթը պարունակում է 4,27% $K_2Cr_2O_7$:

Բյուրեղային կալիում բիքրոմատը լվանում են, վորից հետո հատուկ չորանոցներում չորացնում ու լցնելով փայտյա կամ յերկաթյաթրուկների մեջ դուրս են հանում վաճառքի:

$K_2Cr_2O_7$ -ը գեղեցիկ, կարմիր գույնի նյութ ե, տեսակարար կշիռը՝ 2,7, հալվում է 398°-ում. բարձր ջերմաստիճանում քայլքայիկ վեր և ածվում կալիում մոնոքրոմատի:



100 գրամ ջրի մեջ տարբեր ջերմաստիճաններում լուծվում ե հետևյալ քանակի $K_2Cr_2O_7$.

Ջերմաստիճանը	0°	10°	20°	40°	60°	80°	100°
լուծելիության չափը	4,97	8,5	13,1	29,1	50,5	73	102

Կալիումական քրոմպիկի ստանալու այս յեղանակն աստիճանաբար դուրս են մզկում տեխնիկայից, վորովհետև K_2CO_3 -ը հանդիսանում է բարձականին թանգարժեք նյութ: Ներկայումս կալիումական քրոմպիկի ստանում են նատրիումական քրոմպիկի և կալիում քլորիդի— KCl —կրկնակի տարրալուծումից. կալիում քլորիդի փոխարեն կարելի յե գործածել նաև կալիում սուլֆատ՝ K_2SO_4 .



Նատրիումբիքրոմատի լուծույթն այնքան են խտացնում, վոր նրա մեկ լիտրում 350—400 գրամ $Na_2Cr_2O_7$ գտնվի, վորից հետո լուծույթի վրա ավելացնում են կալիում քլորիդ կամ կալիում սուլֆատ: Այս աղիրն ավելացնում են ստահճանաբար և միաժամանակ կաթսայի լուծույթը հատուկ խառնիչների ոգնությամբ անընդհատ խառնում են. Ավելի նպատակահարմար և նախորոք պատրաստել KCl -ի լուծույթ և ապա ավելացնել նատրիում բիքրոմատի լուծույթի վրա: Ռեակցիան վերջանալուց հետո կալիում բիքրոմատի լուծույթը գոլորշիացնում են,

վորից հետո թողնում են հանգիստ, վորպեսզի նստի գոյացած $NaCl$ -ը կամ Na_2SO_4 -ը: Մնացած լուծույթը սի ուրիշ կաթսայում գոլորշիացնում են հասցնելով նրա խտությունը 440—515 գրամը՝ $K_2Cr_2O_7$ -ի մեկ լիտրում, վորից հետո թողնում են քիչ հանգիստ: Ապա տեղափոխում են բյուրեղացնող արկղների մեջ: Այստեղ լուծույթի բյուրեղացումը տևում է 5—6 որ. մնացած մանր լուծույթը, վորը պարունակում է $NaCl$ և վորոշ քանակի $K_2Cr_2O_7$, հանում են արկղներից. այդ նյութը նորից գնում ե արտադրություն՝ հետագա վերամշակման համար: Մայր լուծույթի հետագա գոլորշիացման ժամանակ $NaCl$ -ը նստում է, իսկ $K_2Cr_2O_7$ -ը մնում է լուծույթի մեջ: Այս լուծույթը գործ են ածում վարպես լուծույթի համար:

Արկղում մնացած բյուրեղները բաների ոգնությամբ գուրս են հատում, լվանում են տաք ջրով, վորից հետո հատուկ չորանոցներում չորացնում են, ապա լցնում յերկաթյաթյունուկների մեջ և հանում վաճառքի:

Նատրիում սուլֆատը կամ նատրիում քլորիդը տաք ջրով լվանում են, ստացված լուծույթը նորից տանում են արտադրություն՝ հետագա մշակման համար:

Կալիումական քրոմպիկի ներկայացնում ե բավականին մեծ կարմիրգեղնավուն բյուրեղներ. տեսակարար կշիռը 2,6—2,7 ե, հալվում է 398°-ում: 100 գրամ ջրի մեջ տարբեր ջերմաստիճաններում լուծվում ե հետևյալ քանակի $K_2Cr_2O_7$.

Ջերմաստիճանը 0° 10° 20° 30° 40° 50° 60° 70° 80° 90° 100° լուծելիութ. քան. 4,6 7,4 12,4 18,4 25,9 35,0 45,0 56,7 68,6 81,194,1

ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՔՐՈՄՊԻԿԻ ՀԱՄԱՍՏՈՒԹԵՆԱԿԱՆ ՍԱՆԴԱՐԾԸ OCT—65

1. Քրոմական անհիդրիդը պետք ե լինի 66—66,98% կամ $K_2Cr_2O_7$ -ը \rightarrow \rightarrow \rightarrow 97—97,5 %

2. Խոնավությունը պետք ե լինի վոչ ավելի քան 2,0%

3. Զլուծվող նյութերի քանակը պետք ե լինի վոչ ավելի, քան 0,3%

ՔՐՈՄՊԻԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՈՐԳԱՆԻՉՄԻ ՎՐԱ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԱՅԴ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Քրոմպիկի արտադրությունը համարվում է բավականին մնասակար արտադրություն: Քրոմպիկը, ինչպես նաև նրա յելանյութերը, աղղելով մարդու որգանիզմի վրա, առաջ են բերում հիգանգություններ, վորոնք հատուկ են սիմիայն այդ արտադրության: Այդ հիվանդությունների դեմ կարելի յե պայքարել՝ 1) արտադրությունը մեխանիզացիայի յենթարկելու միջոցով, 2) վոր ամենակարենորն ե՝ քրոմպիկ գոր-

ժարանի յուրաքանչյուր աշխատակից պետք ե իմանա, թե քրոմպիկի արտադրությունն ինչ ազգեցություն ե ունենում մարդու որգանիզմի վրա և ինչպես կարելի յե պայքարել այդ ազգեցության վեմ:

Մարդու որգանիզմի վրա նախ ազդում ե արտադրության փոշին: Մանրացման ցեխի փոշին կազմված ե քրոմիտի, սուլայի, կրի և ատվալի (վորը համարվում ե ամենից ազգեցիկը) մանը մասնիկներից: Վառարանի բաժնի ողում գտնվում ե շիկացած մասսայի փոշին, վորը պարանակում ե նատրիում մոնոքրոմատի մասնիկները: Բիքրոմատի բաժնում

յեղած գոլորշիները խոշոր չափով ազդում են մարդու որգանիզմի վրա, և վերջապես պատրաստի քրոմպիկի փոշին, վորը նույնպես ուժեղ չափով ազդում ե մարդու որգանիզմի վրա:

Մոնոքրոմատը և բիքրոմատն ուժեղ կերպով ազդում են մարմնի այն մասերի վրա, վորոնք սովորաբար թաց են, և այն մասերի վրա, վորտեղ քերծվածք կա: ավելի քիչ ազգեցություն թողնում են մարմնի չոր մասերի վրա: բավական և մի փոքր քերծվածք, նոսմանավանդ մարմնի այն մասերի վրա, վորոնք ունեն ավելի նուրբ մաշկ, ինչպես, որինակ, մատների արանքները, շըրթունքները, քթի ներսի կողմը և այլն, վորպեսզի վերք առաջանա և յեթե շուտափույթ կերպով միջոցներ ձեռք չառնվեն,

Նկ. 22.

Վերքը կխորանա և հետագա բժշկումը կդժվարանա:

Քրոմպիկի փոշին, նստելով աչքի լորձաթաղանթի վրա, առաջ ե քերում է հիվանդություն, վորի բժշկումը յերբեմն բավականին յերկար ժամանակ և պահանջում: Քրոմի միացությունները, նստելով քթի լորձաթաղանթի վրա, առաջ են բերում փոշտոց, հետո արյունահոսություն, և վերջապես կարող ե ծակվել քթի միջնապատը: Այս ավելի նեշտությամբ կարող ե տեղի ունենալ այն դեպքում, յերբ կեղտու ձևաքով մաքրում են քթի անցքերը (ոռւնգներ), շոշափում են աչքերը:

Քրոմատները շատ հեշտությամբ կարող են անցնել որգանիզմի ները, յերբ կեղտու ձևաքերով ցեխում գործ են ածում սննդամթերք-

ներ. վերքը կարող ե առաջ գալ ձեռքի, վոտքի և մարմնի մյօւս մասերի վրա:

Յերբ բավականին յերկար ժամանակ փոշին շնչառության գործարաններով ներս ե ծծվում, կարող ե առաջ ըերել շնչավազի, շնչափողի ցնցուղների և թոքերի հիվանդություն, վորի հետեւանքը լինում ե հազը և յերբեմն ել խուզ և արյուն:

Վորպեսզի շնչառության որգանները վրա չափով արտադրության փոշին և գոլորշին, անհրաժեշտ ե գործածել ուսապիրատոր կամ մառայից ու բամբակից պատրաստած դիմակ: Մոնոքրոմատի և բիքրոմատի լուծույթը ձեռքերի ու վոտքերի վրա չթափի:

լու համար անհրաժեշտ ե գործածել ուեզինե ձեռնոցներ և ուեզինե կոշիկներ:

Աչքերը փոշուց ու գոլորշուց պաշտպանելու համար անհրաժեշտ ե գործածել հատուկ ակնոցներ: Վորպեսզի քրոմատները բերանը չընկնեն, պետք ե հետեւ ձեռքի մաքրության, աշխատանքից հետո անհրաժեշտ ե լավ լվանալ ձեռները և յերեսը, բերանը և քիթը պետք ե մաքրել կամ մաքուր ջրով կամ բորբթթվի լուծույթով (մեկ թերի գթալ բորբթու լուծել մեկ բաժակ ջրի մեջ):

Քթի միջնապատը ծակվելուց կանխելու համար անհրաժեշտ ե որական մի քանի անգամ քթի ներսի կողմը ծածկել վազելինով, կամ վազելինը լանոլինի հետ խառն գործածելով:

Անհրաժեշտ ե յուրաքանչյուր անգամ աշխատանքից հետո լոզանալ գործարանի բաղնիքում տաք ջրով և սապոնով, լավ մաքրել մազերը, բեղերը և մորուքը, հիշելով մի բան, վոր մազերի վրա փոշին ավելի շատ ե կրտակվում: Լողանալուց կամ լվացվելուց հետո անհրաժեշտ ե մարմնի բաց մասերին, վորոնք շփկել են քրոմատների հետ, վազելին քսել: Արտահագուստը գործարանից դուրս չպետք ե տանել: Պետք ե ճիշել, վոր արտահագուստի հետ միասին բնակարանն ե տարվում արտադրության փոշին, վորը կարող ե ազգել ընտանիքի անգամների



առաղջության վրա: Լավ պետք ե հետեւ, վոր մարմինի վրա վերը
չերեա, իսկ յերեվալու դեպքում անմիջապես բժշկի դիմել:

Քրոմպիկի արտադրության մեջ աշխատողների առողջությունը պահապանելու համար անհրաժեշտ ե նրանց բարձր վրակի սնունդ տար, ինչպես, որինակ, կաթ, ձու, միս, յուղ և այլն:

Գործարանում արվող կաթը կամ յուղն անհրաժեշտ ե սգտագործել գործարանում, ընդմիջուսի ժամանակ, և վոչ թե տանել տուն, ինչպես այդ անում են արտադրության մեջ աշխատող բանվորներից շատերը:

Քրոմպիկի արտադրության մեջ աշխատող յուրաքանչյաւր աշխատակից պես ե հիօթ, վոր իր առողջությունը գտնվաւմ ե իւ ձեռքում յեփ ցանկացած դեպքաւմ կարող ե խօսափել այն բայց հիվանդաւթյուններից վար կարող ե առաջացնել քրոմպիկի արտադրությունը:

Պատավանատար խմբագիր Ն. ԽԱՆԶՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Մ. ՃԻՒԲԱՂՅԱՆ

Կեղլական խմբագիր Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սրբազրիչներ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հանձնված ե արտադրության փետրվարի 1-ին 1937 թ. Ստարագրված ե տպագրության փետրվարի 20 1937 թ. Հրատարակություն 3626. Ստատիգմատն. 5. Ծավալ 4 մամակ.
Տիրած 1000. Պատվեր № 233

Уполномоченный № О-459. Типография Краевого Армянского Издательства
„ГРО“, Ростов-Дон, Ворошиловский пр., № 27.

ԳԻՆԸ 1 ԱՐԵՎ.

279

На армянском языке
Инж. АРДЭРУНИ АБРАМЯН

ХРОМПИК



АРМЕНГИЗ—ЕРЕВАН

«Ազգային գրադարան



NL0283443

26 235